



«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
ԳՅՈՒՄՐՈՒ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԳՅՈՒՄՐՈՒ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ

(2017 – 2021թթ.)

ԳՅՈՒՄՐԻ 2017

Ռազմավարական պլանը մշակվել է ՀԱՊՀ Գյումրու մասնաճյուղի տնօրենի պաշտոնակատարի 2016թ. նոյեմբերի 25-ի թիվ 01-03/88 հրամանով ձևավորված ՀԱՊՀ ԳՄ 2017-2021թթ. Ռազմավարական պլանի մշակման հանձնախմբի (Հավելված 1) կողմից՝ ի կատարումն ՀԱՊՀ Հոգաբարձուների խորհրդի 29.10.2016թ. թիվ 10/16-02 որոշման հանձնարարականի:

«ՀԱՊՀ ԳՄ 2017-2021թթ. Ռազմավարական պլան»-ը քննարկվել և հավանության է արժանացել Մասնաճյուղի գիտական խորհրդի 20.07.2017թ. նիստի թիվ 30 որոշմամբ, հաստատվել է ՀԱՊՀ Գիտխորհրդի օգոստոսի 28-ի թիվ 01 որոշմամբ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Նախաբան	4
2. Մասնաճյուղն այսօր	5
3. Մասնաճյուղի առաքելությունը	8
4. Մասնաճյուղի հեռապատկերը	8
5. Մասնաճյուղի զարգացման ռազմավարական նպատակները և խնդիրները	10
Նպատակ 1	10
Նպատակ 2	13
Նպատակ 3	16
Նպատակ 4	20
Նպատակ 5	23
Նպատակ 6	27
Նպատակ 7	30
Նպատակ 8	32
Նպատակ 9	35
6. Վերջաբան	38
Հավելված 1	40
Հավելված 2	41
Հավելված 3	57
Հավելված 4	59

1. ՆԱԽԱԲԱՆ

Մասնաճյուղի գործունեության հնգամյա ռազմավարական պլանավորումը սկիզբ է առել 2007 թվականից, երբ իրականացվեց Մասնաճյուղի 2001-2006թթ. գործունեության վիճակագրական մանրակրկիտ վերլուծություն՝ ըստ հետևյալ բնագավառների՝ ընդունելություն, ուսանողական համակազմ, ուսումնամեթոդական բնագավառ, ռեսուրսներ և կառավարում, ինֆրակառուցվածք, գիտություն և նորարարություն, ինֆորմացիոն տեխնոլոգիաներ, արտաքին կապեր և միջազգային համագործակցություն: Ձևակերպվեցին յուրաքանչյուր բնագավառում առաջընթացի կողմնորոշիչ ցուցանիշները՝ 5 տարվա կտրվածքով, ինչպես և միջավայրային վերլուծության ու գնահատման 4 հիմնական ցուցանիշները:

Նախորդող վերլուծությանը համահունչ՝ մշակվեց նաև Մասնաճյուղի «2007-2011թթ. Ստրատեգիական պլան»-ը: Պլանն ամփոփում էր Մասնաճյուղի առաքելությունը, նպատակները, դրանց իրականացման խնդիրները, առաջընթացի գնահատման ցուցանիշները և Մասնաճյուղի գործունեության ուժեղ ու թույլ կողմերի, հնարավորությունների ու վտանգների SWOT վերլուծությունը: Այդ փաստաթղթով սահմանվեցին բուհի գործունեության **նախագծորեն կողմնորոշված և կանխատեսելի** հիմքերը:

Երկրորդ փաստաթուղթը՝ «ՀՊՃՀ (Պոլիտեխնիկ) Գյումրու մասնաճյուղի 2012-2016թթ. Ռազմավարական պլանը»-ը, հաստատված ՀՊՃՀ Գիտական խորհրդի 2012թ. սեպտեմբերի 22-ի թիվ 09 որոշմամբ, սահմանում էր Մասնաճյուղի հետագա զարգացման ռազմավարական պլանավորման գործընթացը, կողմնորոշիչ ցուցանիշների ընտրության բազան, SWOT վերլուծության բովանդակությունը: Հարկ է նշել, որ երկրորդ ռազմավարական պլանով նախատեսված որոշ ցուցանիշներ չապահովվեցին՝ հանրապետությունում և հատկապես Շիրակի տարածաշրջանում ստեղծված անբարենպաստ սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական իրավիճակի պատճառով: Անկանխատեսելի չափերով կրճատվեցին Մասնաճյուղի ուսանողական համակազմը, ֆինանսական մուտքերը և այլն: Շատ խնդիրների լուծումը հնարավոր եղավ միայն օպերատիվ միջոցառումների իրականացման շնորհիվ:

Ելնելով այդ իրողությունից՝ Մասնաճյուղի 2017-2021թթ. ռազմավարական պլանը կառուցելիս պահանջվում է առավել հիմնավորված և իրատեսորեն առաջադրել նրա զարգացման խնդիրներն ու սահմանել կողմնորոշիչ

ցուցանիշները, չբացառելով, որ մոտակա տարիներին ևս Մասնաճյուղի գործունեության ու ֆինանսական կայունության պահպանման վրա կարող են ազդել սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական դժվարհաղթահարելի խնդիրները: Ռազմավարական նոր պլանում Մասնաճյուղի գործունեության երկարաժամկետ պլանավորման տեսանկյունից կարևորվում են ֆինանսական կայունության երաշխիքների ապահովումը, կրճատվող ուսանողական համակազմի պայմաններում բնականոն առաջընթացի պահպանումը: Ռազմավարական նոր պլանի կարևորագույն նպատակներից են նաև Մասնաճյուղի կառուցվածքային հիմնավորված փոփոխություններով և հաստիքախնայողությամբ ռեսուրսախնայողության լավագույն տարբերակի իրականացումը, Մասնաճյուղի կառավարման օպերատիվության բարձրացումը, գիտամանկավարժական որակյալ կազմի պահպանման և զարգացման համար սոցիալական երաշխիքների ստեղծումը, ձեռնարկատիրական լրացուցիչ գործունեության խթանումը:

Մասնաճյուղի զարգացման նախանշված նպատակներին կարելի է հասնել նրա վարչական և գիտամանկավարժական կազմերի միասնական և նպատակամետ ջանքերով:

2. ՄԱՄՆԱՃՅՈՒՂՆ ԱՅՍՕՐ

«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի Գյումրու մասնաճյուղը ՀՀ Շիրակի մարզում տեխնիկական և տեխնոլոգիական գիտակրթական կողմնորոշմամբ միակ բարձրագույն ուսումնական հաստատությունն է: Մասնաճյուղը հիմնադրվել է 1959թ. սեպտեմբերին և անցած տարիների ընթացքում 21 մասնագիտությունների գծով պատրաստել է շուրջ 16000 շրջանավարտներ, ովքեր հսկայական ավանդ են ներդրել տարածաշրջանի կրթական ոլորտի, արդյունաբերության և տնտեսության զարգացման, գիտական միջավայրի ձևավորման գործում:

Մասնաճյուղի կազմում գործում են ֆակուլտետներ, կրթական բաժանմունքներ, ամբիոններ, քոլեջ, ավագ դպրոց, կրթության որակի ապահովման և կառավարման բաժին, բազային գիտահետազոտական լաբորատորիա: Մասնաճյուղի կառավարման մարմիններն են Գիտական խորհուրդը, Տնօրինությունը: Ուսանողական համայնքի աշխատանքը համակարգում է Մասնաճյուղի Ուսանողական խորհուրդը:

Մասնաճյուղը նպաստում է տարածաշրջանի համար ճարտարագիտական կադրային պահանջարկի ապահովմանը, գիտատեխնոլոգիական ներուժի զարգացմանը, դպրոցականների և ուսանողների կարիերայի ընտրությանը ու մասնագիտական կողմնորոշմանը:

Մասնաճյուղի մասնագիտացման տիրույթը ներառում է մեքենաշինության, շինարարության, տեքստիլ և թեթև արդյունաբերության, ինֆորմատիկայի, միկրոէլեկտրոնիկայի, տեղեկատվական տեխնոլոգիաների, էլեկտրաէներգետիկայի, տրանսպորտի, տնտեսագիտության ոլորտների բակալավրական, մագիստրոսական, միջին մասնագիտական կրթական ծրագրերը:

Մասնաճյուղն իրականացնում է ուսուցում մինչբուհական և բուհական հետևյալ կրթական ծրագրերով.

- ավագ դպրոցի,
- միջին մասնագիտական,
- բակալավրական,
- մագիստրոսական:

Բացի նշված հիմնական ծրագրերից, Մասնաճյուղն առաջարկում է նաև լրացուցիչ կրթական ծրագրեր՝ շարունակական կրթության միջոցով:

Նշված կրթական ծրագրերով ուսուցման կազմակերպումն ապահովում է ուսանողների շարժունության նախադրյալներ՝ ինչպես Մասնաճյուղի ներսում մի կրթական ծրագրից մյուսը անցումով, այնպես էլ այլ ուսումնական հաստատություններից Մասնաճյուղ տեղափոխվելու ճանապարհով:

Հիմնական կրթական ծրագրերով Մասնաճյուղում այսօր անվճար կամ վճարովի հիմունքներով, առկա և հեռակա ուսուցման ձևերով, սովորում են շուրջ 750 սովորող (ավագ դպրոց, քոլեջ) և ուսանող (բակալավրատ, մագիստրատուրա):

Ուսումնական գործընթացը սպասարկում են 85 դասախոսներ, որոնցից 55-ը (64,7%) ունեն գիտությունների դոկտորի կամ թեկնածուի գիտական աստիճան: Մասնաճյուղի գիտամանկավարժական ներուժը, նյութատեխնիկական հագեցվածությունը, ինչպես և Համալսարանի կենտրոնական կրթահամալիրում առկա բազմամյա աշխատանքային փորձի օգտագործումը հնարավորություն են տալիս պատրաստելու որակյալ մասնագետներ, ծավալելու գիտահետազոտական և գյուտարարական գործունեություն, իրականացնելու դրամաշնորհային ծրագրեր: Գտնվելով ՀԱՊՀ կազմում՝ Մասնաճյուղը

միջտապես մասնակից է բարձրագույն կրթության բարեփոխումների գործընթացներին:

Շարունակաբար զարգանում և նորացվում է Մասնաճյուղի ենթակառուցվածքները: Մասնաճյուղն ունի տեխնիկապես վերազինված քոմպյուտերային ներքին ցանց, տեխնոլոգիական արդիական կարողություններով հագեցած մի շարք լսարաններ, գիտաժողովների և այլ միջոցառումների համար նախատեսված տեսաարահ, դիզայնի, ռոբոտաշինության, եռաչափ մոդելավորման լաբորատորիաներ և այլն: Առանձնահատուկ դեր ունի «Արդիական միասնական պոլիտեխնիկ» դրամաշնորհային ծրագրով կազմակերպված «Մեխատրոնիկայի և ռոբոտատեխնիկայի» լաբորատորիան, որը հնարավորություն է տալիս ՀԱՊՀ ANEL-ի օրինակով մեկտեղել 12 լաբորատոր աշխատանքային տեղեր, որոնցից յուրաքանչյուրում կարելի է իրականացնել շուրջ մեկ տասնյակ լաբորատոր և հետազոտական փորձեր:

Համացանցում տեղադրված են Մասնաճյուղի կայքը, ֆեյսբուքյան էջը, ՀԱՊՀ կայքում առկա է Մասնաճյուղի էջ, որը պարբերաբար թարմացվում է: Մասնաճյուղի բոլոր մասնաշենքերում ապահովված է համացանցի հասանելիությունը՝ Wi-Fi տեխնոլոգիայով: Հիմնական ստորաբաժանումներում և համակարգչային սրահներում ապահովված է մալուխային եղանակով Մասնաճյուղի ցանցին միացման առավել արագ և կայուն կապ: Մասնաճյուղում համացանցի հետ կապն իրականացվում է Վիվա-Սել-ՄՏՍ ընկերության 25 *Մբտ/վ* արագությամբ և Յու-Քոմ ընկերության 50/10 *Մբտ/վ* արագությամբ օպտիկամանրաթելային մալուխներով:

Մասնաճյուղն իրականացնում է գիտակրթական համագործակցության պայմանագրեր ու համաձայնագրեր մարզի, հանրապետության և արտերկրի 20 կազմակերպությունների հետ, այդ թվում՝ Գյումրիում գործող տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի շատ ընկերությունների, արտադրական ձեռնարկությունների, Երևանյան բանկերի Գյումրու մասնաճյուղերի, Ռուսաստանի Դաշնության, Ուկրաինայի, Վրաստանի մի շարք համալսարանների հետ: Մասնաճյուղը մասնակցում է նաև ՀԱՊՀ-ի կողմից իրականացվող միջազգային կրթական և գիտական որոշ ծրագրերի:

Հավակնելով դառնալ ինժեներական կրթության տարածաշրջանային առաջատար կենտրոն՝ Մասնաճյուղը առանձնահատուկ դեր է հատկացնում Գյումրու Տեխնոլոգիական կենտրոնի և նրան համագործակցող կազմակերպությունների հետ գործընկերային կապերի ստեղծմանը՝ կրթական

և գիտական նոր, համատեղ ծրագրերի մշակման ու ներդրման, ինչպես նաև Մասնաճյուղի դասախոսների և ուսանողների գործունեության ու կարիերայի զարգացման լայն ասպարեզ ստեղծելու նպատակով:

3. ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի (ՀԱՊՀ) Գյումրու մասնաճյուղը ԵրՊԻ Լենինականի մասնաճյուղի և Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի (Պոլիտեխնիկ) Գյումրու մասնաճյուղի իրավահաջորդն է և որպես Շիրակի մարզում ինժեներական կրթություն իրականացնող միակ բուհ՝ ունի առաքելություն.

- ապահովել բարձր որակավորում ունեցող ինժեներական կադրերի պատրաստումը մեքենաշինության, շինարարության, տեքստիլ և թեթև արդյունաբերության, ինֆորմատիկայի, միկրոէլեկտրոնիկայի, տեղեկատվական տեխնոլոգիաների, էլեկտրաէներգետիկայի, տրանսպորտի, տնտեսագիտության ոլորտներում՝ ընդհանուր ճարտարագիտական և մասնագիտական կրթության հիման վրա, արձագանքել մարզի տնտեսության կարիքներին և հասարակության կրթական պահանջմունքներին՝ նպաստելով տնտեսության և աշխատաշուկայի ինժեներական պահանջարկի բավարարմանը,
- նպաստել նորարարական տեխնոլոգիաների բնագավառում գիտական հետազոտությունների և ինովացիոն մշակումների ծավալմանը, դրանց արդյունքների ապրանքայնացմանը, միջազգային գիտակրթական համագործակցության համակողմանի զարգացմանը, ազգային գիտական և գիտամանկավարժական ներուժի վերարտադրությանն ու հզորացմանը, դառնալ մարզում գիտատեխնիկական նորարարական մշակումների առաջատար կենտրոն,
- նախապատրաստել ուսանողներին՝ կարիերայի նպատակային ընտրությանը, աջակցել շրջանավարտների մասնագիտական առաջընթացի իրականացմանը, նպաստել Մասնաճյուղի և մարզային կառույցների համագործակցությանը՝ աշխատաշուկայի խնդիրների լուծման համար:

4. ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՀԵՌԱՊԱՏԿԵՐԸ

ՀԱՊՀ կազմում Մասնաճյուղը ձգտում է դառնալ.

- ✓ գիտակրթական հաստատություն, որը մարզի տեխնոլոգիական, ճարտարագիտական կրթության ու գիտության զարգացման առաջատարն է,

- ✓ գիտակրթական հաստատություն, որը սովորողների համար ապահովում է համահամալսարանական չափորոշիչները բավարարող բարձրորակ և արդիական կրթություն ստանալու, արդյունավետ հետազոտական գործունեություն իրականացնելու հնարավորություն՝ ընձեռելով գիտակրթական ռեսուրսների մատչելիություն և հասանելիություն սոցիալական և տարիքային բոլոր խմբերի համար,
- ✓ հաստատություն, որտեղ բոլորը, ներառյալ ուսանողները և սովորողները, ազատ հաղորդակցության և անկաշկանդ բանավեճի միջավայրում կրում են կորպորատիվ պատասխանատվություն հաստատության զարգացման ընթացքի և արդյունքի համար,
- ✓ հաստատություն, որն ունակ է ապահովելու իր ֆինանսական կայունությունը և հնարավորության սահմաններում ստեղծում է անհրաժեշտ սոցիալական երաշխիքներ աշխատակիցների համար:

5. ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ
ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՆՊԱՏԱԿ 1. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԿԱՅՈՒՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Բազմազանեցնել և ակտիվացնել Մասնաճյուղի ընդունելության գործընթացը՝ ապահովելով Մասնաճյուղի գործունեության համար անհրաժեշտ ուսանողական համակազմ կրթական բոլոր աստիճաններում՝ մասնագիտությունների պահպանման և ընդլայնման նպատակով կիրառելով դրանց պարբերաբար շրջափոխումը:

Մասնաճյուղը, լինելով Շիրակի մարզում (որոշ մասնագիտությունների դեպքում՝ նաև հանրապետությունում) ինժեներական աշխատուժի և արտադրության կազմակերպիչների վերարտադրության միակ հաստատությունը, իր զարգացման ռազմավարությունում որպես առաջնահերթություն պետք է ընդունի մասնաճյուղի գործունեության համար անհրաժեշտ ուսանողական համակազմի ապահովումը, որի իրագործումը դժվարանում է մարզում հանրակրթական դպրոցների շրջանավարտների տարեցտարի նվազող թվի պայմաններում: Այս խնդրի լուծման համար, հաշվի առնելով սոցիալական և ժողովրդագրական բնույթի առկա խնդիրները, որոնք առավել սուր կերպով են արտահայտված Շիրակի մարզում, Մասնաճյուղը պետք է բազմազանեցնի իր մուտքային հնարավորությունները՝ կրթական ծրագրերը համապատասխանեցնելով աշխատաշուկայի կարիքներին: Կարևոր է զարգացնել շարունակական և սերտիֆիկացված կրթության ծառայությունը՝ տարիքային տարբեր խմբերի դիմորդների համար հնարավորություն ստեղծելով վերամասնագիտացման և նոր հմտությունների ձեռքբերման համար: Մասնաճյուղի ուսանողական համակազմի կայուն համալրում կարելի է ապահովել գործող ավագ դպրոցի և քոլեջի սովորողների թվի զգալի մեծացմամբ: Անհրաժեշտ է ակտիվացնել գործունեությունը վիրահայության և ՌԴ զորակայանի շրջանում՝ դեպի Մասնաճյուղ դիմորդների նոր հոսք ապահովելու նպատակով:

Նշված շեշտադրումները թելադրում են հետևյալ խնդիրները:

ԽՆԴԻԴ 1.1. Նպատակաուղղված իրականացնել Մասնաճյուղի ընդունելության պլանավորումը և ըստ մասնագիտությունների տեղերի բաշխումը՝ մասնագետների աշխատաշուկայի սահմանափակ պահանջարկի պայմաններում:

Ռազմավարության հիմնական ուղղությունները

- Իրականացնել մարզի և տարածաշրջանի արտադրական և կրթական միջավայրերի մշտադիտարկում և վերլուծություն՝ բարձրագույն, միջին մասնագիտական և հանրակրթական աստիճաններով Մասնաճյուղի կրթական ծառայությունների առաջարկի ճշգրտման նպատակով:

- Ձևավորել Մասնաճյուղի մտակա տարիների ընդունելության մասնագիտությունների նորացված, իրատեսական ցանկ և պլանային չափաքանակներ՝ հաշվի առնելով մարզում մասնագետների սահմանափակ պահանջարկի պայմաններում կրթական ծրագրերի մշտական շրջափոխման անհրաժեշտությունը:

- Մշակել Մասնաճյուղում նոր կրթական ծրագրերով ուսուցում կազմակերպելու առաջարկություններ՝ հաշվի առնելով Գյումրու Տեխնոլոգիական կենտրոնի զարգացման, ինչպես նաև Գյումրիում տուրիզմի զարգացման ուղղությամբ Կառավարության ծրագրերը:

- Ապահովել մագիստրոսական կրթության իրականացում նոր կրթական ծրագրերով՝ Մասնաճյուղում ստեղծելով այդ մասնագիտություններով երկաստիճան կրթություն ստանալու հնարավորություն:

ԽՆԴԻԴ 1.2. Ըստ հնարավորության ավելացնել և պահպանել Մասնաճյուղում սովորողների թիվը՝ մարզում առկա ժողովրդագրական խնդիրների պայմաններում գործադրելով գովազդարշավի բազմազան հնարավորությունները:

Ռազմավարության հիմնական ուղղությունները

- Ընդլայնել և արդյունավետ դարձնել Մասնաճյուղի ընդունելության գովազդարշավը մարզում՝ լայնորեն օգտագործելով ժամանակակից տեխնոլոգիաների և հաղորդակցության միջոցների ընձեռած հնարավորությունները:

- Գովազդային գործընթացում առավելագույնս ներգրավել Մասնաճյուղի աշխատակիցներին և ուսանողներին, աշխատակիցների ուժերով կազմակերպել անվճար խորհրդատվական և նախապատրաստական դասընթացներ ապագա դիմորդների համար:

- Ընդլայնել ընդունելությունը ավագ դպրոցի և միջին մասնագիտական կրթական ծրագրերով՝ այն համարելով Մասնաճյուղի ուսանողական համակազմի համալրման արդյունավետ միջոց, դպրոցներում ստեղծելով հե-նակետային դասարաններ:

- Սերտացնել Մասնաճյուղի և մարզի դպրոցների միջև կապերը, խթանել և բովանդակալից դարձնել Մասնաճյուղի ամբիոններ ավարտական դասարանների աշակերտների ճանաչողական այցերը՝ վերջիններիս մասնագիտական կողմնորոշման նպատակով:

- Մշակել և վիրահայության ու Գյումրիում տեղակայված ՌԴ գորակայանի աշխատակիցների շրջանում իրագործել միջոցառումներ Մասնաճյուղում կրթություն ստանալու հնարավորությունը գովազդելու ուղղությամբ:

ԽՆԴԻԴ 1.3. *Խթանել մասնաճյուղում շարունակական և լրացուցիչ կրթության իրականացումը, բազմազանեցնել կրթական նույն ծրագրերով առաջարկվող դասընթացների թիվը, զարգացնել այդ ծառայության հեռավար մատուցման հնարավորությունները:*

Ռազմավարության հիմնական ուղղությունները

- Ձևավորել լրացուցիչ և շարունակական կրթության ծրագրերի ցանկ՝ կրթական տարբեր մակարդակներով, հաշվի առնելով Մասնաճյուղի մասնագիտական ներուժի իրական հնարավորությունները, ինչպես և Գյումրու Տեխնոլոգիական կենտրոնի, Գյումրիում գործող ՏՏ ոլորտի կազմակերպությունների, տեքստիլ և թեթև արդյունաբերության ձեռնարկությունների պահանջարկը:

- Օգտագործել հեռավար ուսուցման ձևը լրացուցիչ և շարունակական կրթության կազմակերպման ոլորտում՝ ապահովելով դրա մատչելիությունը մեծաթիվ շահառուների համար:

**Առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշներ
(հինգ տարվա կտրվածքով)**

➤ Հեռանկարային մասնագիտությունների ձևավորված անվանացանկ 2018-2021թթ. Համար, կրթական ծրագրերի և ընդունելության չափաքանակների պլանավորման մեթոդաբանություն և կիրառման մեխանիզմներ՝ սկսած 2017թ.:

➤ Համագործակցության պայմանագրերի կնքում մարզի առնվազն 10 ավագ դպրոցների հետ՝ մինչև 2020թ.:

➤ Մասնաճյուղի ընդունելության ծավալը բակալավրական և մագիստրոսական կրթական ծրագրերով (առկա և հեռակա)՝ տարեկան առնվազն 150:

➤ Ընդունելության ծավալը մինչբուհական կրթական ծրագրերով՝ տարեկան առնվազն 70, այդ թվում՝ հանրակրթական ծրագրով՝ 35, միջին մասնագիտական կրթական ծրագրով՝ 35:

➤ Ընդունելության ծավալը լրացուցիչ և շարունակական կրթական ծրագրով՝ տարեկան 50:

➤ Մասնաճյուղում ուսումնառողների թիվի պահպանում հիմնական և լրացուցիչ կրթական ծրագրերով՝ առնվազն 750, այդ թվում՝ հանրակրթական ծրագրով՝ 80, միջին մասնագիտական ծրագրով՝ 80, բակալավրի ծրագրով (առկա և հեռակա)՝ 490, մագիստրոսի ծրագրով (առկա և հեռակա)՝ 50, լրացուցիչ և շարունակական կրթական ծրագրով՝ 50:

ՆՊԱՏԱԿ 2. ԲԱՐՁՐՈՐԱԿ, ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

Բարելավել կրթական բոլոր ծրագրերով ուսումնառության կազմակերպման և իրականացման որակն ու արդյունավետությունը՝ ապահովելով համահամալսարանական չափանիշներ:

Ուսուցման որակի բարձրացումը, դասավանդման արդյունավետ մեթոդների կիրառումը և ուսումնական պլանների ու ծրագրերի արդիական բովանդակության ապահովումն այն առաջնահերթ խնդիրներից են, որոնց լուծման պարագայում կապահովվեն Մասնաճյուղի մասնագիտական բարձր վարկանիշը, նրա մրցունակությունը և շրջանավարտների ծառայունակության պատշաճ մակարդակը: Այս խնդիրների լուծման գործում վճռորոշ է որակի

գնահատման և ապահովման ներմասնաձյուղային համակարգի դերը, որի խնդիրն է լիարժեք գործունեությամբ ապահովել կրթության որակի համահամալսարանական չափանիշները:

ԽՆԴԻԴ 2.1. Ապահովել կրթության որակի վերահսկման առավել արդյունավետ գործընթաց՝ ուսուցման որակի վրա ազդող գործոնների մշտադիտարկման, գնահատման և բարելավման միջոցով, դասավանդման, ուսումնառության կազմակերպման, ակադեմիական առաջադիմության ամփոփման գործառույթների բարելավում՝ ըստ անհրաժեշտության առցանց համակարգով առարկաների դասավանդման կիրառմամբ:

Ռազմավարության հիմնական ուղղությունները

- Ներդնել և հնարավորինս լիարժեք կիրառել ՀԱՊՀ որակի ապահովման էլեկտրոնային առցանց համակարգը (ՌԱԷԱՀ)՝ ընդլայնելով դրա օգտագործման գործառույթային հնարավորությունները:

- ՌԱԷԱՀ գործիքամիջոցներով իրականացնել սոցիոլոգիական ամենամյա առցանց հարցումներ՝ կրթական ծրագրերից և դասավանդման մեթոդաբանությունից ուսանողների, շրջանավարտների և մյուս շահառուների բավարարվածության գնահատման նպատակով:

- Կատարել հետևողական աշխատանք՝ Համալսարանի դասախոսական կազմի վարկանիշային գնահատման էլեկտրոնային առցանց համակարգը Մասնաձյուղում ներդնելու համար:

- Ակտիվացնել Մասնաձյուղի ուսանողական կառույցի դերը դասախոսների աշխատանքի գնահատման ուսանողական հարցումների գործընթացում՝ հարցման թափանցիկությունն ու անաչառությունն ապահովելու համար:

- Ապահովել դասավանդման գործընթացում նոր տեխնոլոգիաների կիրառման որակական և քանակական էական աճ՝ ստեղծելով անհրաժեշտ նախապայմաններ դասավանդման արդի մեթոդների ու ձևերի յուրացման համար, առանձին դասընթացների իրականացման համար կիրառել հեռուսուցման ձևեր՝ գործընթացում ներգրավելով Համալսարանի առաջատար դասախոս-մասնագետներին:

ԽՆԴԻԴ 2.2. Իրականացնել Մասնաճյուղում գործող ուսումնական ծրագրերի բովանդակային և կառուցվածքային վերանայման, ինչպես նաև ամբիոնները ուսումնամեթոդական նոր նյութերով շարունակաբար համալրման գործընթաց:

Ռազմավարության հիմնական ուղղությունները

- Իրականացնել մասնաճյուղի ամբիոնների ծրագրամեթոդական ապահովվածության ուսումնասիրություն՝ պարզելու համար առկա իրավիճակը, խնդիրները և դրանց լուծման առաջնահերթությունները:

- Ներդնել ուսումնամեթոդական նյութերի պատվերային ձևակերպման հստակ մեխանիզմ՝ համաձայն Մասնաճյուղում նախապես կազմված ժամանակացույցի, հրաժարվելով հրատարակչական պլանների ձևավորման ներկայիս տարերային եղանակից:

- Առավել արդյունավետ դարձնել գործատու կազմակերպությունների հետ համագործակցությունը ծրագրային-ուսումնամեթոդական նյութերի և հատկապես միայն Մասնաճյուղում իրականացվող կրթական ծրագրերի ստեղծման գործընթացում՝ դրանց կենսունակությունն ապահովելու նպատակով:

- Բազմազանեցնել ու արդյունավետ դարձնել արտադրական և հետազոտական պրակտիկաները, ինչը հնարավորություն կտա բարելավել ուսանողների գործնական պատրաստականությունը՝ ապահովելով ուսուցման գործընթացում տեսական և կիրառական գիտելիքների և հմտությունների ձեռքբերման արդյունավետ համատեղումը:

**Առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշներ
(հինգ տարվա կտրվածքով)**

➤ Մասնաճյուղում ուսումնամեթոդական նյութերի ստեղծման պատվերի ձևակերպման մեխանիզմ և մոտակա երեք տարիներին դրանց հրատարակման պլան-ժամանակացույց՝ 2017-2018 ուստարվանից:

➤ Ամբիոններում կազմված և տնօրինության կողմից հաստատված պլան-ժամանակացույցներ դասավանդման նոր տեխնոլոգիաների կիրառմամբ առարկայական դասընթացների պատրաստման համար՝ 2017-2018 ուստարվանից:

➤ Մասնաճյուղում համալսարանական ակադեմիական առաջադիմության արդյունքների էլեկտրոնային գրանցման և կառավարման համակարգի ներդրում՝ մինչև 2019թ.:

➤ Ամենամյա սոցիոլոգիական հարցումներ՝ կրթական ծրագրերից և դասավանդման մեթոդաբանությունից ուսանողների, շրջանավարտների և այլ շահառուների բավարարվածության գնահատման համար՝ 2017-2021թթ.:

ՊԱՏԱԿ 3. ՄՐՑՈՒՆԱԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ՝ ԻՆՈՎԱՑԻՈՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՄԲ

Ստեղծել պայմաններ Մասնաճյուղի գիտական ներուժի զարգացումը, հետազոտական ծրագրերի արդյունավետության բարձրացումը, դրանց ինովացիոն ու տարածաշրջանային կողմնորոշումն ապահովելու համար:

Գործելով Համալսարանի կազմում՝ Մասնաճյուղը նպատակ է հետապնդում դառնալ նրա հետազոտական կարևորագույն ստորաբաժանումներից մեկը: Մասնաճյուղի գիտահետազոտական առաքելությունը ենթադրում է գիտական ներուժի անընդհատ համալրում, ակտիվ մասնակցություն տարածաշրջանի տնտեսական զարգացման և միջազգային գիտական ծրագրերում, գիտատեխնոլոգիական համագործակցության ընդլայնում ՀԱՊՀ Երևանյան կրթահամալիրի ամբիոնների և Գյումրու Տեխնոլոգիական կենտրոնի հետ, հետազոտությունների արդյունքների առևտրայնացման գործընթացի բարելավում: Այս ամենն ունի նաև հեռահար նպատակ՝ Մասնաճյուղը Շիրակի մարզում դարձնել գիտատեխնոլոգիական առաջատար կենտրոն:

Վերլուծելով Մասնաճյուղի գիտական ներուժի տարիքային կազմը՝ կարևորվում է առաջիկայում այդ ներուժի կայուն զարգացումն ու արդյունավետ օգտագործումը, երիտասարդ գիտական կադրերի նպատակային պատրաստումը Համալսարանի ասպիրանտուրայի և հայցորդական ինստիտուտի հնարավորությունների արդյունավետ օգտագործմամբ:

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության ծրագրերը առաջիկա հնգամյակում Շիրակի մարզում բիզնեսի, արտադրությունների և տուրիզմի զարգացման համար անհրաժեշտ ֆինանսավորման ներդրումների բարենպաստ միջավայր ապահովելու վերաբերյալ՝ Մասնաճյուղի առաջնահերթ խնդիրը պետք է լինի իր

գիտական ներուժն ակտիվորեն ներգրավել այդ ծրագրերի իրականացմանը՝ առաջարկելով գիտատեխնոլոգիական առաջանցիկ լուծումներ:

ԽՆԴԻԴ 3.1. *Ձարգացնել Մասնաճյուղի գիտական ներուժը՝ Համալսարանի ասպիրանտուրայի և հայցորդական ինստիտուտի հնարավորությունների օգտագործմամբ:*

Ռազմավարության հիմնական ուղղությունները

- Ձևավորել Մասնաճյուղի 2017-2021թթ. ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի ընդունելության հեռանկարային պլանը՝ հաշվի առնելով Մասնաճյուղի հետազոտական ներուժի փուլային համալրման, զարգացման, երիտասարդ դասախոսների պլանավորված պատրաստման պահանջները:

- Որպես դասախոսի և ամբիոնի աշխատանքի գնահատման կարևորագույն բաղադրիչ արժևորել ուսումնառության ընթացքում ուսանողական համակազմի առավել կարող ուժերի մասնակցությունը պրոֆեսորադասախոսական կազմի կողմից իրականացվող հետազոտական ծրագրերին:

- Խրախուսման ու շահագրգռման ճանապարհով երիտասարդ մասնագետների համար ստեղծել նպաստավոր պայմաններ՝ Մասնաճյուղում դասախոսական ու հետազոտողի աշխատանքը և երկարաժամկետ համագործակցությունը առավել զրավիչ դարձնելու համար:

- Ամբիոնների դասախոսական համակազմում որոշակի տարիքային խմբի երիտասարդ մասնագետներ ունենալու պայմանը համարել անհրաժեշտություն:

ԽՆԴԻԴ 3.2. *Ապահովել Մասնաճյուղում կատարվող գիտական աշխատանքների և հատկապես ֆինանսավորվող հետազոտական ծրագրերի ծավալի ու արդյունավետության աճ՝ Երևանյան կրթահամալիրի ամբիոնների գիտամանկավարժական ներուժի, փորձի և օժանդակության արդյունավետ օգտագործման ճանապարհով:*

Ռազմավարության հիմնական ուղղությունները

- Նպաստել Մասնաճյուղի գիտական ներուժի օգտագործման արդյունավետության բարձրացմանը՝ միջամբիոնային գիտական համագործակցության, համատեղ նախագծերի իրականացման, հետազոտական նոր խմբերի ձևավորման, Համալսարանի Երևանյան կրթահամալիրի ամբիոնների, գիտական ստորաբաժանումների, ձևավորված գիտական դպրոցների հետ գիտահետազոտական համագործակցության ընդլայնման ճանապարհով:

- Ընդլայնել կիրառական հետազոտությունների և փորձարարական-նախագծային աշխատանքների սպեկտրը՝ առավելապես Շիրակի մարզի համար գիտական կարևոր և գերակա ուղղություններով:

- Ապահովել դրամական միջոցների հատկացումը հեռանկարային նախագծերի կարճաժամկետ ֆինանսավորմանը, մեկնարկային (start up) ընկերությունների ստեղծմանը, գիտական գործուղումների, գիտական հրատարակությունների և գյուտերի արտոնագրման տուրքերի վճարմանն աջակցելու նպատակով՝ կիրառելով աշխատակիցների դրամական խրախուսման մեխանիզմներ:

ԽՆԴԻՐ 3.3. Ստեղծել նպաստավոր պայմաններ՝ գիտական հետազոտությունների ինովացիոն կողմնորոշման, արդյունքների պատշաճ հրապարակայնացման, դրանց առևտրայնացմանն ուղղված միջոցառումների իրականացման համար:

Ռազմավարության հիմնական ուղղությունները

- Արդյունավետորեն օգտագործել Համալսարանում ստեղծվող հետազոտական գործունեության արդյունքների առևտրայնացումը և ներդրումը կազմակերպող և համակարգող ինովացիոն ծառայության հնարավորությունները՝ Մասնաճյուղի մշակումների արդյունքները առևտրայնացնելու նպատակով:

- Ակտիվացնել համագործակցությունը Գյումրու Տեխնոլոգիական կենտրոնում գործող կազմակերպությունների հետ՝ օգտագործելով ՏՏ ոլորտում նրանց նորարարական գործունեության հնարավորությունները:

- Փոխշահավետ հիմունքներով աշխատանքային տարածք և անհաժեշտ պայմաններ տրամադրել տարաբնույթ հետազոտական, տեխնոլոգիական,

նորարարական ընկերություններին ու ձեռնարկություններին՝ Մասնաճյուղի լավագույն ուսանողներին, շրջանավարտներին, մասնագետներին նրանց աշխատանքներում ներգրավվելու հնարավորության ընձեռմամբ:

- Առավելագույնս օգտագործել Մասնաճյուղի տեղեկատվական հնարավորությունները՝ հասարակությանն ու գիտական հանրությանը Մասնաճյուղում կատարվող հետազոտական և ինովացիոն աշխատանքներն ու դրանց արդյունքները ներկայացնելու համար:

ԽՆԴԻՐ 3.4. Բարձրացնել ուսանողական գիտական աշխատանքի արդյունավետությունը՝ ուսուցման գործընթացում լայնորեն ներմուծելով և զարգացնելով հետազոտական բաղադրիչը, առավելագույնս խթանելով ուսանողների ներգրավումը հետազոտական աշխատանքներում:

Ռազմավարության հիմնական ուղղությունները

- Նպատակաուղղված և արդյունավետ օգտագործել Համալսարանի ANEL-ի, Մասնաճյուղի Մեխատրոնիկայի լաբորատորիայի, ինչպես նաև Գյումրու Տեխնոլոգիական կենտրոնի «Ճարտարագիտական լաբորատորիաների» հնարավորությունները՝ խթանելու և զարգացնելու համար ուսանողների հետազոտական և նորարարական ձիրքերը:

- Բակալավրական և մագիստրոսական ուսուցման գործընթացում նախատեսված կուրսային աշխատանքների և նախագծերի առաջադրանքներում ներմուծել հետազոտական տարրեր, դիպլոմային աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների ընտրությունը կատարել հետազոտական տարրի ներմուծման հնարավորության հաշվառմամբ:

- Էապես բարելավել Մասնաճյուղում իրականացվող ուսանողական հետազոտական աշխատանքների որակը՝ «Ուսանողական գիտական ընկերության» գործունեության վերակազմակերպման և ակտիվացման ճանապարհով:

***Առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշներ
(հինգ տարվա կտրվածքով)***

- Ասպիրանտուրայի ընդունելության հեռանկարային պլան՝ 2017-2021թթ.:
- Մասնաճյուղի կողմից պայմանագրային հիմունքներով իրականացվող գիտական և ինովացիոն նախագծերում ներգրավվածություն՝ մինչև 2021թ.
 - պրոֆեսորադասախոսական կազմ՝ առնվազն 15%,
 - ուսանողներ՝ առնվազն 1 ուսանող յուրաքանչյուր նախագծում:
- Թեկնածուական 5 ատենախոսության պաշտպանություն՝ 2017-2021թթ.:
- Գիտական աստիճան ունեցողների մշտական հաշվեկշիռը Մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական կազմում՝ առնվազն 65%:
- Պրոֆլեմային գիտահետազոտական լաբորատորիաների թիվը առնվազն 2՝ մինչև 2021թ.:
- Ֆինանսավորվող հետազոտական նախագծերի թիվը առնվազն 5՝ 2017-2021թթ.:
- Մեկնարկային ընկերությունների թիվը առնվազն 2՝ մինչև 2021թ.:
- Գիտական զեկուցումների և հրատարակված հոդվածների թիվը առնվազն 200՝ 2017-2021թթ.:
- Մասնակցություն միջազգային գիտաժողովներին՝ առնվազն 25 զեկուցում՝ 2017-2021թթ.:
- Մասնաճյուղի Ուսանողական գիտական ընկերության տարեկան գիտաժողովներ՝ 2017- 2021թթ.:

ՆՊԱՏԱԿ 4. ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՓՈՓՈԽՈՒՄ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

Բարելավել Մասնաճյուղի կառուցվածքը՝ համապատասխանեցնելով այն ներկայիս գործառույթների բովանդակությանը և ծավալներին, բարձրացնել կառավարման արդյունավետությունը:

Մասնաճյուղի կառուցվածքային փոփոխության անհրաժեշտությունը բխում է վերջին տարիներին ուսանողական համակազմի նվազման պատճառով ըստ կրթական ծրագրերի ուսանողական հոսքերի վերաբաշխման և ուսումնական ստորաբաժանումների գործառույթների ծավալների փոփոխման, ինչպես նաև Մասնաճյուղը սպասարկող ստորաբաժանումների պարտականությունների վերաբաշխման և հստակեցման խնդիրներից՝ էլնելով դրանց օպտիմալացման անհրաժեշտությունից:

Որպես հիմք ընդունելով Համալսարանի Ստրատեգիական պլանով նախատեսված գիտակրթական ինքնուրույն միավորների՝ ինստիտուտների ձևավորման ռազմավարությունը՝ կարևորվում է Մասնաճյուղի կառուցվածքային փոփոխությունը, ինչը հնարավորություն կտա առավել արդյունավետ դարձնել նրա կառավարումը: Մասնաճյուղի կառուցվածքի համար կիրառելի է Համալսարանում մշակված ինստիտուտային կառուցվածքը՝ համաձայն որի առավել նպատակահարմար է համարվում գործող ֆակուլտետների միավորումը, ամբիոնների խոշորացումը և համահամալսարանական կարգավիճակին անցումը:

Բնականաբար, ինստիտուտային կառուցվածքին բնորոշ փոփոխությունների դեպքում կառաջանա անհրաժեշտություն՝ լրացուցիչ մշակելու Մասնաճյուղի որոշ գործառույթները, հստակեցնելու սպասարկող ստորաբաժանումների իրավասությունները՝ պայմանավորված Գյումրու մասնաճյուղի առանձնացված ստորաբաժանում լինելու կարգավիճակով: Մասնաճյուղի կառուցվածքի ներդաշնակեցումը համալսարանական ինստիտուտի կառուցվածքին հնարավորություն կտա լիարժեքորեն օգտվել Համալսարանի՝ իր կառույցներին պատվիրակված իրավունքներից և պարտականություններից:

ԽՆԴԻՐ 4.1 Փոփոխել Մասնաճյուղի կազմակերպական կառուցվածքը՝ ինստիտուտային գիտակրթական կառուցվածքի կազմակերպմանը և կառավարման համակարգի արդյունավետության բարելավմանը համահունչ:

Ռազմավարության հիմնական ուղղությունները

- Ուսումնասիրել Համալսարանում առկա ինստիտուտային կառույցների գործառույթների առանձնահատկությունները և դրանց հաշվառմամբ մշակել Մասնաճյուղի՝ որպես Համալսարանի առանձնացված տարածքային ստորաբաժանման նոր կառուցվածքը, ապահովելով համալսարանական կառուցվածքային ձևերին սահուն անցման գործընթացը:

- Իրականացնել Մասնաճյուղի՝ որպես մեկ ինստիտուտային կառույցի ձևավորման և այդ ինստիտուտում ըստ կրթական աստիճանների, ծրագրերի և ուսուցման ձևերի ուսումնառության և հետազոտական գործունեության համար անհրաժեշտ ստորաբաժանումների կազմակերպման գործընթացը՝

հստակեցնելով խոշորացված ամբիոնների և սպասարկող ստորաբաժանումների գործառույթների շրջանակը:

- Կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով վերակազմավորել վարչակազմակերպական ընդհանուր կառուցվածքը՝ սահմանելով գործառույթների շրջանակների տարանջատում և որոշումների ընդունման ու կատարման հստակ համակարգ՝ հաշվի առնելով ինստիտուտային կառուցվածքի առանձնահատկությունները:

- Ապահովել Մասնաճյուղի վարչական կազմի պլանային, պարբերական վերապատրաստման գործընթացը՝ ծառայողական անհրաժեշտ հմտությունների և որակների բարելավման նպատակով:

ԽՆԴԻԸ 4.2. Ընդլայնել և խորացնել Մասնաճյուղում ուսանողական ինքնավարության շրջանակները:

Ռազմավարության հիմնական ուղղությունները

- Ապահովել ուսանողների գործուն մասնակցությունը Մասնաճյուղի կառավարման, կրթության որակի ապահովման նպատակով իրականացվող մշտադիտարկման, վերահսկման գործընթացներում՝ ուսանող-դասախոս հարաբերումների կազմակերպման համար օգտագործելով Մասնաճյուղի տեղեկատվական համակարգը:

- Օժանդակել Մասնաճյուղի ուսանողական կառույցի կողմից ինքնուրույն կամ Համալսարանական ուսանողական կառույցների, այլ բուհերի և կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում ծրագրերի և միջոցառումների իրականացմանը՝ նպաստելով մարզի ուսանողական համայնքում Մասնաճյուղի ուսանողության առաջավոր դերի բարձրացմանը:

**Առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշներ
(հինգ տարվա կտրվածքով)**

➤ Մասնաճյուղի նոր կառուցվածքի կայացում ստորաբաժանումների լիազորությունների և պարտականությունների տարանջատմամբ՝ մինչև 2019 թ.:

➤ Մասնաճյուղի կազմակերպական կառուցվածքի նորացմամբ պայմանավորված անհրաժեշտ կանոնակարգային և նորմատիվային փաստաթղթերի նորացում և համալրում՝ 2017-2019 թթ. :

➤ Մասնաճյուղի կառավարման և տեղեկատվական ապահովման համակարգերի ինտեգրում Համալսարանի կառավարման և միասնական տեղեկատվական ապահովման համակարգերի հետ Մասնաճյուղին տրված իրավասությունների սահմաններում՝ 2018/2019 ուստարում:

➤ Մասնաճյուղի վարչական կազմի պլանային վերապատրաստումներ անցած աշխատակիցների մասնաբաժինը ընդհանուր կազմում՝ 70%:

➤ Ուսանողների գործուն մասնակցություն Մասնաճյուղի կառավարման, կրթության որակի ապահովման նպատակով իրականացվող մշտադիտարկման, վերահսկման գործընթացներում՝ 2017-2021թթ.:

ՆՊԱՏԱԿ 5. ԿԱԴՐԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑՄԱՆ, ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ, ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԿԱՆ ԴԱՍԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Ստեղծել առաջնահերթ հնարավորություններ՝ դասախոսական առկա կազմի վերապատրաստման և վերամասնագիտացման համար, կրթական գործընթացներում ներգրավել երիտասարդ, հեռանկարային մասնագետների, ապահովել վարչական կազմի երիտասարդացման, Մասնաճյուղում բարեվարքության մթնոլորտի պահպանման, ուսանողների ռազմահայրենասիրական դաստիարակության գործընթացները:

Տարիների ընթացքում Մասնաճյուղում ձևավորվել է որակյալ ներուժով գիտամանկավարժական կազմ, որը միշտ հանդիսացել է նրա գոյապայքարի գլխավոր կռվաններից մեկը: Մասնաճյուղի առաջնահերթ նպատակն է պահպանել ու զարգացնել այդ ներուժը: Սակայն Գյումրու մասնաճյուղում ընդունելության մասնագիտական ցանկի նորացման և պահանջարկի վերաբաշխման արդյունքում շատ մասնագետներ զրկվում են իրենց մասնագիտությամբ ուսումնական բեռնվածք ունենալու հնարավորությունից: Այս իրողությանը զուգահեռ Մասնաճյուղում բացվում են նոր մաս-

նագիտություններ, որոնք պահանջում են դասախոսական կազմի համալրում: Նշված հանգամանքներով է պայմանավորված առկա դասախոսական կազմի վերապատրաստման և վերամասնագիտացման համար առաջնահերթ հնարավորությունների ստեղծման, ինչպես նաև կրթական գործընթացներում երիտասարդ, հեռանկարային մասնագետների ներգրավման անհրաժեշտությունը:

Մասնաճյուղի բնականոն գործունեության համար, բացի որակյալ դասախոսական կազմից, անհրաժեշտ է ապահովել նաև արդյունավետ կառավարում: Մասնաճյուղի կառավարման ստորաբաժանումների ղեկավարների տարիքը մոտ է, իսկ որոշ օղակներում գերազանցում է 70 տարին: Առաջիկա տարիների ռազմավարական խնդիրներից է այդ ստորաբաժանումներում բանիմաց, գործունյա և կազմակերպչական հմտություններով օժտված երիտասարդ աշխատակիցների ներգրավումը, որոնք տեխնոլոգիական և տեղեկատվական տարբեր համակարգերի կիրառմամբ ունակ կլինեն օպերատիվ և արդյունավետ կերպով իրականացնելու կառավարման գործառույթները:

Կարևորագույն խնդիր է Մասնաճյուղում բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի պահպանումը, աշխատակիցների և ուսանողների փոխադարձ շփումներում հարգանքի, վստահության վրա հիմնված թափանցիկ աշխատանքային փոխհարաբերությունների և բարեվարքության ձևավորումը, հաջողությունների ու անհաջողությունների համար կորպորատիվ պատասխանատվության սերմանումը:

Մասնաճյուղի գործունեության բոլոր օղակներում ուսանողական կառույցի դերակատարության և մասնակցության խթանումը կհանգեցնի ուսանողական ինքնավարության ընդլայնմանն ու խորացմանը, բարեվարքության պահպանման, ռազմահայրենասիրական դաստիարակության հարցերում ուսանողության պատասխանատվության բարձրացմանը, ինչը իր հերթին կնպաստի Մասնաճյուղում կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը և այդ երևույթի նկատմամբ անհանդուրժողականության մթնոլորտի ձևավորմանը, ուսանողների ռազմահայրենասիրական դաստիարակությանը Ազգ-Բանակ միջոցառումների շրջանակում:

ԽՆԴԻԴ 5.1. Ապահովել պայմաններ՝ Մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական կազմին ներկայացվող որակական պահանջների կատարման համար:

Ռազմավարության հիմնական ուղղությունները

- Իրականացնել Մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական կազմի գնահատում՝ առաջիկա տարիներին նրա անհրաժեշտ համալրման և սահուն սերնդափոխության համար:

- Ապահովել պրոֆեսորադասախոսական կազմի պարտադիր պլանային և շարունակական կատարելագործում և վերապատրաստում՝ օգտագործելով Համալսարանի, անհրաժեշտության դեպքում, նաև այլ կազմակերպությունների հնարավորությունները:

- Ապահովել երիտասարդ դասախոսական կադրերի պատրաստումը և գիտահետազոտական նախագծերում նրանց ներգրավումը՝ որպես ամբիոնների և դրանց աշխատանքը համակարգող մասնաճյուղային կառույցի գործունեության արդյունավետության գնահատման չափանիշ:

- Մշակել դասախոսների ստեղծագործական և ծառայողական արդյունավետ աշխատանքի գնահատման և խրախուսման միջոցներ:

ԽՆԴԻԴ 5.2. Մշակել վարչակազմի երիտասարդացման օպտիմալ հաստիքացուցակ՝ պայմանավորված Մասնաճյուղի կառուցվածքային փոփոխությամբ :

Ռազմավարության հիմնական ուղղությունները

- Մասնաճյուղի նոր կառուցվածքով պայմանավորված՝ հասնել լրիվ դրույքաչափերով աշխատող աշխատակիցների թվի աճին՝ հաստիքացուցակի մշակման և օպտիմալացման ընթացքում պարտականությունների վերաբաշխման ճանապարհով, միևնույն ժամանակ չվտանգելով Մասնաճյուղի հիմնական գործառույթների արդյունավետ իրականացումը:

- Ապահովել Մասնաճյուղի վարչակազմի պարբերական և պլանային կատարելագործումը՝ կառավարման նոր մեթոդների յուրացման և ներդրման նպատակով:

- Խրախուսել դասախոսական կազմի ակտիվ մասնակցությունը Մասնաճյուղի կառավարման և որոշումների ընդունման գործընթացներում:

ԽՆԴԻԴ 5.3. Ապահովել պայմաններ՝ Մասնաճյուղում բարեվարքության և բարոյահոգեբանական անհրաժեշտ մթնոլորտի ստեղծման ու կոռուպցիոն ռիսկերի նվազեցման համար, ուսանողների ռազմահայրենասիրական դաստիարակության իրականացման համար:

Ռազմավարության հիմնական ուղղությունները

- Կազմավորել էթիկայի հանձնաժողով Մասնաճյուղի աշխատակիցների և ուսանողների մասնակցությամբ՝ բախումնային իրավիճակների քննարկման, կողմերի միջև փոխհամաձայնության և համերաշխության մթնոլորտի պահպանման նպատակով:

- Նպաստել Մասնաճյուղի վարչական կազմի, արհեստակցական կազմակերպության և ուսանողական խորհրդի միջև համագործակցության արդյունավետ միջավայրի ստեղծմանը:

- Ապահովել նորմատիվ բոլոր փաստաթղթերի հրապարակայնացումը և հասանելիությունը ստորաբաժանումներին, ուսանողական խորհրդին, արհեստակցական կազմակերպությանը՝ բարձրացնելով ուսանողների և աշխատակիցների իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ իրազեկվածությունը:

- Ապահովել ուսանողների անկաշկանդ մասնակցությունը պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի գործունեության գնահատման և օբյեկտիվ տեղեկություններ ստանալու հարցում՝ նկատված թերացումների վերացման նպատակով:

- Ապահովել Մասնաճյուղի ուսանողական ինքնավար կառույցի ակտիվ դերակատարությունը բարեվարքության նորմերի արմատավորման, որոշումների ընդունման թափանցիկության և հակակոռուպցիոն միջավայրի ապահովման հարցերում՝ խթանելով կոռուպցիոն ռիսկերի նվազեցումը և այդ երևույթի նկատմամբ անհանդուրժողական վերաբերմունքի ձևավորումը:

- Նպաստել ուսանողական խորհրդի կողմից Մասնաճյուղում Ազգ-Բանակ շրջանակային միջոցառումների իրականացմանը՝ ուսանողների ռազմահայրենասիրական դաստիարակության նպատակով:

**Առաջընթացի գնահատման կողմնորշիչ ցուցանիշներ
(հինգ տարվա կտրվածքով).**

- Մրցութային կարգով ընտրված հիմնական պրոֆեսորադասախոսական կազմի հաշվեկշիռը առնվազն 70 %՝ մինչև 2020թ.:
- Կատարելագործման ծրագրերում ընդգրկված հիմնական պրոֆեսորադասախոսական կազմի հաշվեկշիռը 70%՝ մինչև 2021թ.:
- Ուսանող/դասախոս, ուսանող/աշխատող քանակական հարաբերակցությունների հնարավորինս մոտեցում համահամալսարանական միջին ցուցանիշին՝ 2021թ.:
- Մասնաճյուղի էթիկայի հանձնաժողովի կազմավորում՝ 2017թ.:
- Ուսանողների գործուն մասնակցություն Մասնաճյուղում պրոֆեսորադասախոսական անձնակազմի գործունեության գնահատման, բարելավման նորմերի արմատավորման, որոշումների ընդունման թափանցիկության և հակակոռուպցիոն միջավայրի ապահովման, Ազգ-Բանակ շրջանակային միջոցառումների իրականացման գործընթացներում՝ 2017-2021թթ.:

**ՆՊԱՏԱԿ 6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԵՎ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ**

Ապահովել Մասնաճյուղի ֆինանսական կայունությունը և ռեսուրսների արդյունավետ օգտագործումը:

Մասնաճյուղի բնականոն գործունեության կարևորագույն նախապայմանը նրա ֆինանսական կայունության ապահովումն է: Ներկայումս Մասնաճյուղի ֆինանսական ներհուսքի ամենամեծ մասնաբաժինը՝ շուրջ 90 տոկոսը, մատուցվող կրթական ծառայությունների ստացվող գումարներն են: Ուսանողական համակազմի շարունակական նվազմամբ պայմանավորված՝ այս նպատակով ստացվող ֆինանսական միջոցները բացարձակ արժեքով պակասում են: Վճարովի ուսուցման համակարգում տարեկան ուսման վարձը, մասնավորապես բակալավրական կրթական ծրագրերով, կազմում է 300-360 հազար դրամ, ինչը շուրջ 40%-ով պակաս է Երևանյան կրթահամալիրում

գործող վարձից կամ պետության կողմից որպես ուսման վարձի լրիվ փոխհատուցում տրվող գումարից: Սակայն ելնելով մարզի սոցիալ-տնտեսական իրավիճակից՝ Մասնաճյուղում ուսման վարձերի բարձրացման միջոցով լրացուցիչ ֆինանսական ռեսուրսների ներգրավումը իրատեսական չէ:

Ֆինանսական կայունության ապահովմանը կնպաստեն ավագ դպրոցի և միջին մասնագիտական կրթական ծրագրերով սովորողների թվի ավելացումը, կրթական նոր ծրագրերի իրականացումը, գիտատեխնոլոգիական մշակումների ընդլայնումը, ինչպես նաև ակտիվ ձեռնարկատիրական գործունեության իրականացումը: Մինևույն ժամանակ կարևորվում են Մասնաճյուղում ֆինանսական ռեսուրսների նպատակային խիստ խնայողական ծախսումները՝ բարձրացնելով այդ միջոցների օգտագործման արդյունավետությունը, գտնելով հնարավորինս նվազագույն ծախսերով առավելագույն արդյունքի հասնելու մեխանիզմներ:

ԽՆԴԻԴ 6.1. Մասնաճյուղի տարեկան ֆինանսական հիմնավորված բյուջեի մշակում՝ նպատակատրուղված առաջադրված ռազմավարական խնդիրների իրագործմանը:

Ռազմավարության հիմնական ուղղությունները

- Կիրառել երկարաժամկետ պլանավորում Մասնաճյուղի գործունեության բոլոր բնագավառներում՝ 2017-2021 թթ.:
- Ապահովել Մասնաճյուղի տարեկան բյուջեի, կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրերի ֆինանսական ծախսումների նախագծերի բաց և թափանցիկ քննարկում բոլոր ստորաբաժանումներում՝ սահմանված կարգով այն հաստատելուց առաջ:

ԽՆԴԻԴ 6.2. Բազմազանեցնել Մասնաճյուղի ֆինանսական ներհոսքը՝ ստորաբաժանումների և առանձին ստեղծագործական խմբերի մասնակցության ապահովմամբ:

Ռազմավարության հիմնական ուղղությունները

- Մեծացնել գիտակրթական լրացուցիչ ծառայություններից, ձեռնարկատիրական գործունեությունից գոյացած միջոցների հաշվեկշիռը Մասնաճյուղի եկամուտների ընդհանուր ծավալում:

- Խրախուսել և աջակցել ստորաբաժանումների, առանձին ստեղծագործական խմբերի ձեռներեցությանը՝ նրանց գործունեությունից արտաբյուջետային լրացուցիչ մուտքերի խթանման նպատակով, հիմնավորված բիզնես-պլանի առկայության և դրա բաց քննարկմամբ փորձագիտական դրական եզրակացության դեպքում, Համալսարանի ռեկտորի համաձայնությամբ՝ պահուստային միջոցներից ժամանակավոր ֆինանսական միջոցներ հատկացնել ֆինանսական վերադարձելիությամբ և ցածր ռիսկայնությամբ կարճաժամկետ ծրագրերի իրագործման համար՝ դրանք մշակելու, փորձարկելու, ապրանքային տեսքի բերելու նպատակով:

- Զարգացնել համագործակցությունը աջակից և բարեգործական, պատվիրատու կազմակերպությունների հետ՝ մասնակից դարձնելով նրանց Մասնաճյուղի զարգացման ծրագրերին:

ԽՆԴԻԴ 6.3. Ապահովել Մասնաճյուղի ֆինանսական ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացումը:

Ռազմավարության հիմնական ուղղությունները

- Իրականացնել ֆինանսական և նյութական ռեսուրսների ճշգրիտ հաշվառում, դրանց պահպանում, խիստ նպատակային օգտագործում, կատարվող ծախսերի հիմնավորված պլանավորում և դրանց հրապարակայնություն՝ ապահովելով ռեսուրսախնայողության ռեժիմ:

- Վարել հաստիքախնայողության խստագույն ռեժիմ՝ ստեղծելով նվազագույն թվաքանակով վարչակառավարչական կազմ՝ ունակ օպերատիվ կերպով իրականացնելու Համալսարանի և Մասնաճյուղի ռազմավարական խնդիրների լուծման հետ կապված գործառույթները:

- Իրականացնել աշխատանքային տեղերը ժամանակակից տեխնիկական և տեխնոլոգիական միջոցներով ապահովելու և կառավարչական կազմի վերապատրաստման գործընթացներ, ինչը թույլ կտա բարձրացնել աշխատանքի արդյունավետությունը:

**Առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշներ
(հինգ տարվա կտրվածքով)**

- Արտաբյուջետային մուտքերի աճ 2016թ. համեմատ առնվազն 3%` 2021թ.:
- Կայունացման ֆոնդի հաշվեկշիռը բյուջեում առնվազն 15%` 2021թ.:
- Աշխատավարձի ֆոնդի աճ 2016թ.-ի համեմատ առնվազն 5%-ի չափով` 2021թ.:
- Մասնաճյուղի վարչական ծախսերի մասնաբաժինը հիմնական հաստիքային կազմի աշխատավարձի ֆոնդում ոչ ավելի, քան 20%` 2020թ.:
- Ուսանողներին հատկացվող ֆինանսական օգնության (ներառյալ ուսման վարձերի գեղչերը) և Մասնաճյուղի վճարովի ուսուցումից արտաբյուջետային մուտքերի հարաբերությունը առնվազն 1/10` 2018թ.:

**ՆՊԱՏԱԿ 7. ԱՐԴԻԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ,
ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ**

Կատարելագործել Մասնաճյուղի նյութատեխնիկական բազան և զարգացնել սոցիալական ենթակառուցվածքը:

Մասնաճյուղի գիտակրթական ծրագրերի իրականացման ներկայանալի մակարդակ կարելի է ապահովել ժամանակակից պահանջները բավարարող նյութատեխնիկական բազայի առկայության պայմաններում, ինչը առաջին հերթին ենթադրում է Մասնաճյուղի շենքային պայմանների հնարավորինս բարելավում և գործող մասնաշենքերի հիմնանորոգում: Անհրաժեշտ է իրականացնել լսարանների և լաբորատորիաների վերահանդերձավորումը ժամանակակից գույքով` ապահովելով ուսումնական գործընթացի նյութատեխնիկական բազային ներկայացվող միասնական համահամալսարանական պահանջները:

ԽՆԴԻՐ 7.1. Գտնել հնարավորություն` լուծելու Մասնաճյուղի ուսումնական մակերեսների համայրման հիմնահարցը:

Ռազմավարության հիմնական ուղղությունները

- Մշակել առաջարկություններ Մասնաճյուղն ուսումնական անհրաժեշտ տարածքներով բավարարելու համար` այս հրատապ խնդրի լուծմանն

ներգրավելով ՀԱՊՀ կառավարման բարձրագույն մարմինն և տեղական ինքնակառավարման մարմիններին:

- Համապատասխան վերադաս կազմակերպություններում հիմնավորել Գյումրու Տեխնոլոգիական կենտրոնի հարևանությամբ Զիվանու 74 հասցեում տեղակայված և չօգտագործվող հիվանդանոցային նախկին շենքը Գյումրու մասնաճյուղին տրամադրելու անհրաժեշտությունը և մարզի համար նման լուծման շահեկանությունը: Համալսարանի աջակցությամբ գտնել գործընկեր կազմակերպություններ՝ Գյումրու մասնաճյուղի հիմնադրման 60-ամյա տարելիցին (2019թ.) այդ մասնաշենքի վերանորոգման համար:

ԽՆԴԻՐ 7.2. Ապահովել Մասնաճյուղում ուսումնական գործընթացի կազմակերպման որակական պահանջների իրականացումը:

Ռազմավարության հիմնական ուղղությունները

- Ձևավորել Մասնաճյուղի մասնաշենքերը վերանորոգելու, լսարանային ֆոնդը ժամանակակից գույքով և սարքավորումներով հագեցնելու ուղղությամբ հնգամյա պլան և ապահովել դրա իրականացումը:

- Մշակել Մասնաճյուղում ուսումնական և օժանդակ տարածքներն առավել արդյունավետ օգտագործելու սխեմաներ՝ ստորաբաժանումների միջև առկա տարածքների վերաբաշխմամբ:

- Օգտագործել Գյումրու Տեխնոլոգիական կենտրոնի ընձեռած հնարավորությունները՝ Մասնաճյուղի նյութատեխնիկական պայմանների ընդլայնման նպատակով, խթանելով և զարգացնելով Մասնաճյուղի և Կենտրոնի միջև համագործակցային կապերը:

- Վերանորոգել Մասնաճյուղի տարածքում գտնվող բաց մարզահրապարակը և կառուցել մեկ նոր բաց (վոլեյբոլի) խաղահրապարակ:

- Իրականացնել Մասնաճյուղի էներգախնայողության, կաթսայատան և մասնաշենքերի ջեռուցման և ջրամատակարարման համակարգերի վերակառուցման և արդիականացման փուլային գործընթաց:

ԽՆԴԻՐ 7.3. Նպաստել Մասնաճյուղի սոցիալական ծրագրերի զարգացմանը:

Ռազմավարության հիմնական ուղղությունները

- Մշակել և պահպանել Մասնաճյուղի տարեկան բյուջեում սոցիալական ծրագրերի և միջոցառումների համար հատկացումների հիմնավորված համամասնություն:

- Մասնաճյուղի ուսանողների և աշխատակիցների համար ստեղծել ֆինանսական աջակցության հնարավորություններ` Համալսարանի մարզաառողջարարական բազաներից պարբերաբար օգտվելու նպատակով:

- Խթանել ուսանողների և աշխատակիցների ակտիվ մասնակցությունը համալսարանական մշակութային և մարզական կյանքին:

- Վերանորոգել և վերասարքավորել Մասնաճյուղի բուֆետ-ճաշարանը:

Առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշներ (հինգ տարվա կտրվածքով)

- Գյումրիում Մասնաճյուղին նոր մասնաշենք տրամադրելու ճանապահով մեկ ուսանողին ընկնող ուսումնական մակերեսի բարելավում ոչ պակաս 8 քմ-ից` մինչև 2020թ.:

- Մասնաճյուղի մասնաշենքերի ընթացիկ և հիմնանորոգման տարեկան հեռանկարային պլանների առկայություն` **2017թ.:**

- Մասնաճյուղի նյութատեխնիկական բազայի զարգացման հեռանկարային պլանի առկայություն` **2017թ.:**

- Մասնաճյուղի կաթսայատան վերազինման հեռանկարային պլանի առկայություն` **2017թ.:**

- Մասնաճյուղի մասնաշենքերի հիմնանորոգման և վերակառուցման ծախսերի հաշվեկշիռը տարեկան հաշվեկշռում` առնվազն 3% :

- Վերակառուցված երկու մարզահրապարակների առկայություն` մինչև 2020թ. :

ՆՊԱՏԱԿ 8. ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ

Ընդլայնել և կատարելագործել Մասնաճյուղի ինֆորմացիոն ենթակառուցվածքը, զարգացնել ՏՏ տեխնոլոգիաների կիրառումը ուսումնական

գործընթացի իրագործման և վերահսկողության, Մասնաճյուղի գործավարության բոլոր բնագավառներում:

Ինֆորմացիոն ենթակառուցվածքի շարունակական զարգացման անհրաժեշտությունը Մասնաճյուղի գործունեության առաջիկա հնգամյակի հիմնական ուղենիշներից մեկն է՝ պայմանավորված ինչպես ներմասնաճյուղային առկա խնդիրներով, այնպես էլ Հայաստանում էլեկտրոնային հասարակության ձևավորման գլոբալ խնդրով: Մասնաճյուղի համար կարևորվում են սեփական տեխնիկական միջոցների, ուսումնական գործընթացում SS տեխնոլոգիաների կիրառման և էլեկտրոնային գործավարության շարունակական բարելավումը, ներքին և արտաքին տեղեկատվական ռեսուրսների մատչելիության ապահովումը: Այս նպատակով Մասնաճյուղի գործունեության հաջորդ կարևոր նշանակետը Երևանյան կրթահամալիրի հետ միասնական ինֆորմացիոն համակարգում ինտեգրումն է:

ԽՆԴԻԴ 8.1. Ընդլայնել և արդյունավետ դարձնել տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառությունը Մասնաճյուղի ուսումնական գործընթացի իրականացման և վերահսկողության ոլորտում:

Ռազմավարության հիմնական ուղղությունները

- Ապահովել տեխնոլոգիական հնարավորություններով լսարանների օգտագործման արդյունավետության էական բարձրացում՝ բոլոր ամբիոններում առարկայացանկի որոշակի պարտադիր մասնաբաժնի համար դասավանդման էլեկտրոնային եղանակների կիրառման ճանապարհով:
- Հարստացնել Մասնաճյուղի գրադարանի էլեկտրոնային կրթական ռեսուրսները, ապահովել ամբիոններում ստեղծված էլեկտրոնային կրթական նյութերի պլանային պարբերական թարմացումը՝ պայմանավորված նոր ուսումնական պլաններով, նոր տեխնոլոգիաների, գիտական նվաճումների մասին տեղեկատվության մատուցման անհրաժեշտությամբ:
- Ապահովել մասնաճյուղի միացումը Համալսարանի ուսումնական գործընթացի կառավարման էլեկտրոնային համակարգին:

- Ապահովել տեխնիկա-տեխնոլոգիական հնարավորություններ՝ ներգրավելու համար Համալսարանի առաջատար մասնագետներին առանձին դասընթացներից առցանց դասախոսություններ վարելու գործընթացում:

ԽՆԴԻԴ 8.2. Կատարելագործել Մասնաճյուղի ինֆորմացիոն բազան՝ ապահովելով կրթական, հետազոտական, կառավարման ռեսուրսների համընդհանուր մատչելիություն և տեղեկատվության հանրայնացում:

Ռազմավարության հիմնական ուղղությունները

- Իրականացնել Մասնաճյուղի տեղեկատվական ռեսուրսների առկա վիճակի ուսումնասիրություն՝ զարգացման առաջնահերթությունները որոշելու, տեղեկատվական ռեսուրսների մատչելիությունն ընդլայնելու, դրանց օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

- Մշակել և հաստատել Մասնաճյուղի ինֆորմացիոն ենթակառուցվածքի, համակարգչային տնտեսության արդիականացման պլան-ժամանակացույց:

- Արդյունավետ օգտագործել Համալսարանի Երևանյան կրթահամալիրի գրադարանի էլեկտրոնային ռեսուրսները Մասնաճյուղի կրթական ու հետազոտական կարիքների համար:

- Մասնաճյուղում ներդնել Համալսարանում կիրառվող ակադեմիական առաջադիմության արդյունքների էլեկտրոնային գրանցման և կառավարման համակարգը:

- Խթանել ուսումնական գործընթացում ուսանող-դասախոս հարաբերումների էլեկտրոնային ձևերի մշակումը և ակտիվ կիրառումը, ձեռնարկել միջոցառումներ՝ օգտագործելու համար նաև ժամանակակից հեռուսուցման նոր տեխնոլոգիական հնարավորությունները:

- Մշակել և Համացանցում տեղադրել Մասնաճյուղի նորացված Web-կայքը՝ այն համալրելով նաև ռուսալեզու և անգլալեզու տարբերակներով:

- ՀԱՊՀ ինտերնետային կայքում արդիականացնել և ընդլայնել Մասնաճյուղի էջը՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով:

Առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշներ (հինգ տարվա կտրվածքով).

➤ Մասնաճյուղի տեղեկատվական ռեսուրսների և նոր տեխնոլոգիաների ներդրման հաստատված պլան-ժամանակացույց՝ 2017 թ.:

➤ Ուսուցման տեխնիկական միջոցներով զինված լսարանների ընդհանուր թիվը հնագամյակի վերջում՝ 10:

➤ Ուսումնական գործընթացում էլեկտրոնային ռեսուրսների օգտագործմամբ դասընթացների հաշվեկշիռը հնագամյակի վերջում՝ առնվազն 50%:

➤ Դասավանդման գործընթացում էլեկտրոնային տեխնոլոգիաներ կիրառող հիմնական դասախոսների հաշվեկշիռը հնագամյակի վերջում՝ առնվազն 50%:

➤ Գրադարանի ընթերցասրահում տեղակայված և Համացանց ազատ մուտքի հնարավորությամբ միացված համակարգիչների թիվը առնվազն 2՝ մինչև 2019թ.:

➤ Բոլոր ստորաբաժանումների ղեկավարներին և աշխատակիցներին Մասնաճյուղի էլեկտրոնային փոստում հասցեների տրամադրում, էլեկտրոնային կապի՝ որպես միասնական գործառույթների և կառավարման համար գործիքի պարտադիր կիրառություն՝ մինչև 2018 թ.:

➤ Մասնաճյուղի ամբիոնների կողմից բուհում և Գյումրու Տեխնոլոգիական կենտրոնում վիրտուալ միջավայրում իրականացվող լաբորատոր աշխատանքների և գիտական փորձարարական հետազոտությունների ցանկի տեղադրում Մասնաճյուղի կայքում՝ 2018 թ.:

➤ Համացանցում տեղադրված Մասնաճյուղի արդիականացված Web-կայքը՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով՝ 2018թ.:

ՆՊԱՏԱԿ 9. ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ՄԻԶԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

Ընդլայնել գործընկերային կապերը Մասնաճյուղի պրոֆիլին բնորոշ ոլորտների և բիզնեսի հատվածների հետ, զարգացնել մատուցվող ծառայությունների ոլորտը, խթանել Մասնաճյուղի ներգրավումը միջազգային գիտակրթական ծրագրերում:

Մասնաճյուղի համար կարևոր նշանակություն ունի պատվիրատու կառույցների հետ գործընկերային կապերի հաստատումը, Մասնաճյուղի

պրոֆիլին բնորոշ արտադրական ոլորտների և բիզնեսի հատվածների հետ գործընկերային համագործակցությունը, հանրային ծրագրերում առավելագույնս ներգրավումը: Մասնաճյուղը պետք է ներգրավվի մարզի տնտեսության առջև ծառայած տեխնոլոգիական և արտադրական խնդիրների լուծման գործընթացներում, ստեղծի փոխշահավետ կոմերցիոն կապեր արտադրական ձեռնարկությունների հետ, իրականացնի մարզի տնտեսության զարգացմանը միտված գիտակրթական նախագծեր:

Կարևորվում է նաև Մասնաճյուղի միջազգայնացումը, Համալսարանի հետ միասին միջազգային գիտակրթական ծրագրերին մասնակցության ակտիվացումը, արտասահմանյան բարձր վարկանիշ և ազդեցության գործակից ունեցող գիտական հանդեսներում հոդվածների հրատարակումը, միջազգային ներկայացուցչական գիտաժողովներին մասնակցությունը:

ԽՆԴԻՐ 9.1. *Ընդլայնել և բազմազանեցնել գործընկերային կապերը Մասնաճյուղի պրոֆիլին բնորոշ արտադրական ոլորտների և բիզնեսի հատվածների հետ:*

Ռազմավարության հիմնական ուղղությունները

- Ձևավորել համագործակցության երկարաժամկետ պայմանագրային հարաբերություններ Գյումրու Տեխնոլոգիական կենտրոնի և նրան գործակից կազմակերպությունների հետ:
- Ընդլայնել գործատուների ներգրավվածությունը Մասնաճյուղի ուսումնական գործընթացում՝ դիպլոմային աշխատանքների թեմաների ընտրության և պաշտպանության, պրակտիկաների կազմակերպման և ուսումնական այլ հարցերում:
- Խորացնել Մասնաճյուղի և գործատուների միջև համագործակցային կապերը՝ Մասնաճյուղի շրջանավարտների մուտքը աշխատաշուկա առավել մատչելի դարձնելու համար:

ԽՆԴԻՐ 9.2. *Ապահովել Մասնաճյուղի առավելագույն ներգրավումը մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերում, բազմազանեցնել հանրային ծրագրերում Մասնաճյուղի ներգրավման ձևերը:*

Ռազմավարության հիմնական ուղղությունները

- Զարգացնել Մասնաճյուղի համագործակցությունը Շիրակի մազպետարանի և Գյումրու քաղաքապետարանի հետ՝ հանրային կարիքներին ուղղված տարածաշրջանային ծրագրերի իրականացման համար, առաջարկելով Մասնաճյուղի ծառայությունները (նաև անվճար) տեխնիկատեխնոլոգիական խորհրդատվության, նախագծային աշխատանքների ոլորտում:

- Ընդլայնել և բազմազանեցնել հասարակության հետ Մասնաճյուղի կապերը, զարգացնել ակտիվ համագործակցություն ՋԼՄ-ների հետ, շարունակել օպերատիվ լրատվությունը, սեփական գովազդային նյութերի հրատարակումը:

- Ձևավորել Մասնաճյուղի գիտակրթական և խորհրդատվական ծառայությունների ցանկը և ապահովել դրա տարածումը հանրության լայն շրջաններում:

- Կազմակերպել Մասնաճյուղի գործունեության վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրություն՝ հասարակության արդի պահանջների բավարարման ծրագրերում Մասնաճյուղի առավել բազմակողմանի և արդյունավետ մասնակցություն ապահովելու համար:

ԽՆԴԻԴ 9.3. *Ընդլայնել և բազմազանեցնել Մասնաճյուղի միջազգային կապերն ու համագործակցությունը միջազգային ծրագրերում:*

Ռազմավարության հիմնական ուղղությունները

- Ապահովել Մասնաճյուղի ստորաբաժանումների մասնակցությունը Համալսարանի կողմից իրականացվող միջազգային համագործակցության ծրագրերում:

- Աջակցել Մասնաճյուղի աշխատակիցների, ասպիրանտների ու հայցորդների ընդգրկմանը միջազգային գիտական նախագծերում՝ ապահովելով անհրաժեշտ խորհրդատվություն և տեղեկատվություն ֆինանսավորման աղբյուրների որոնման և հայտերի մշակման հարցերում:

- Խրախուսել արտասահմանյան բարձր վարկանիշ և ազդեցության գործակից ունեցող գիտական հանդեսներում Մասնաճյուղի գիտամանկավարժական կազմի, ասպիրանտների ու հայցորդների կողմից հոդվածների հրատարակումը և միջազգային ներկայացուցչական գիտաժողովներին մասնակցությունը:

**Առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշներ
(հինգ տարվա կտրվածքով)**

- Գործընկեր ձեռնարկությունների և կազմակերպությունների թիվը (ըստ կնքված պայմանագրերի) 40՝ 2021թ.:
- Մասնաճյուղի գիտակրթական և խորհրդատվական ծառայությունների՝ կայքում տեղադրված ցանկը՝ 2017 թ.:
- Արտերկրի գիտակրթական հաստատությունների հետ գործընկերային կապերի թիվը (ըստ գործող պայմանագրերի) 6՝ 2021թ.:
- Մասնակցություն միջազգային գիտակրթական ծրագրերին (ներառյալ ՀԱՊՀ-ում իրականացվող) առնվազն 1՝ 2021թ.:
- Արտերկրի ազդեցության բարձր գործակից ունեցող գիտական հանդեսներում հրատարակված հոդվածներ առնվազն 12՝ 2021թ.:

6.ՎԵՐՋԱԲԱՆ

Ռազմավարական այս պլանը ՀԱՊՀ Գյումրու մասնաճյուղի գործունեության և հետագա զարգացման հիմնական ուղղորդիչ փաստաթուղթն է առաջիկա հինգ տարիների (2017-2021 թթ.) համար:

Ռազմավարական պլանի նպատակները, նախորդող ժամանակաշրջանների համեմատ, արմատական փոփոխությունների չեն ենթարկվել: Փոփոխություններն առավելապես պայմանավորված են եղել տվյալ ժամանակահատվածի համար նպատակների հստակեցման, խնդիրների լրամշակման կամ նոր խնդիրների առաջադրման, կողմնորոշիչ ցուցանիշների ճշգրտման անհրաժեշտությամբ:

Վերլուծելով Մասնաճյուղի անցած ճանապարհը և վերջին հինգ տարիների ընթացքում ցուցանիշների փոփոխման դինամիկան՝ նոր ռազմավարական պլանը համապատասխանեցվել է նոր իրողություններին ու Համալսարանի

հեռապատկերին: Առավել երկարաժամկետ կանխատեսումների հնարավորություն ապահովելու համար իրականացվել է հիմնական խնդիրների առավել երկարաժամկետ՝ ըստ տարիների ցուցանիշների պլանավորումը: Փորձ է արվել հնարավորինս իրատեսորեն պլանավորել Մասնաճյուղի առաջընթացի կողմնորոշիչ ցուցանիշները և առաջիկա հինգ տարիների գործունեությունը նպատակաուղղել այդ ցուցանիշների ապահովմանը:

Սակայն ռազմավարական պլանը «քարացած փաստաթուղթ» չէ, և այն ընթացիկ վերլուծությունների արդյունքում միշտ պետք է բաց լինի ճշգրտման, կողմնորոշիչ ցուցանիշների շտկման համար, եթե փաստվում է ստեղծված օբյեկտիվ պայմանների պատճառով դրանց հասնելու անհնարիությունը:

Պլանում ձևակերպված նպատակների և խնդիրների իրագործման հաջողության գրավականը լինելու է Մասնաճյուղի յուրաքանչյուր անդամի՝ աշխատակիցների և ուսանողների համատեղ պատասխանատվության գիտակցումը և նվիրված աշխատանքը՝ հանուն ընդհանուր գաղափարի, որը դրված է Համալսարանի և Մասնաճյուղի տեսլականի հիմքում. *դառնալ գիտակրթական և նորարարական մտքի արդյունավետ աշխատանքի նշանակալի կենտրոն, որն իր էական ազդեցությունն է թողնում Հանրապետության տեխնոլոգիական զարգացման և պաշտպանունակության ամրապնդման գործընթացներում, երիտասարդ սերնդի դաստիարակության, ակտիվ հասարակության ձևավորման խնդրում:*

Լիահույս ենք, որ 2021 թվականին Մասնաճյուղն իր ռազմավարական պլանի իրագործման արդյունքում կկարողանա ներկայացնել իր ձեռքբերումները և հաջողությունները:



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ ԳՅՈՒՄՐՈՒ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ**

ՀՐԱՄԱՆ թիվ 01-03/88

Ք.Գյումրի

25 նոյեմբերի 2016թ.

**ՀԱՊՀ ԳՅՈՒՄՐՈՒ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ 2017-2021ԹԹ. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով ՀԱՊՀ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2016 թ. փետրվարի 5-ի նիստի թիվ 02/16-03 որոշմամբ հաստատված «ՀԱՊՀ հիմնադրամի Գյումրու մասնաճյուղի կանոնադրության» 34-րդ կետի 14) ենթակետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ.

1. Ս.թ. դեկտեմբերի 1-ից ձևավորել ՀԱՊՀ Գյումրու մասնաճյուղի 2017-2021թթ. Ռազմավարական պլանի մշակման աշխատանքային հանձնախումբ՝ հետևյալ կազմով.

- Պապոյան Ա.Ռ. – ՀԱՊՀ ԳՄ տնօրենի պաշտոնակատար (նախագահ),
- Հարությունյան Ս.Լ. – ՀԱՊՀ ԳՄ փոխտնօրենի պաշտոնակատար,
- Մամիկոնյան Բ.Մ. – ՀԱՊՀ ԳՄ փոխտնօրենի պաշտոնակատար (նախագահի տեղակալ),
- Սարգսյան Հ.Ա. - ՀԱՊՀ ԳՄ փոխտնօրենի պաշտոնակատար,
- Արզումանյան Ա.Մ. – ՏնՏՃ ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար,
- Ենգոյան Հ.Վ. – ԲԳ և ՏՀ ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար,
- Անդրիկյան Մ.Ա. – ՀՈՒ Բաժանմունքի վարիչի պաշտոնակատար,
- Վարդանյան Շ.Ս. – ՄԲ և ՇԿ Բաժանմունքի վարիչի պաշտոնակատար,
- Սուքիասյան Ա.Գ. – ԳՄ ԿՈԱՎ բաժնի վարիչ,
- Հարությունյան Ս.Ս. – ԳՄ ուսխորհրդի նախագահ,
- Տոնոյան Ջ.Լ. - ԳՄ գլխավոր հաշվապահ:
- Պեպելյան Հ.Գ. - ԳՄ գիտական քարտուղար (քարտուղար):

2. Կազմակերպել մասնաճյուղի 2017-2021 թթ. Ռազմավարական պլանի մշակման հանձնախմբի աշխատանքային գործընթացը՝ համաձայն հաստատված ժամանակացույցի՝ նկատի ունենալով սահմանված ընթացակարգով մասնաճյուղում Պլանի քննարկման և Համալսարանի գիտական խորհրդի հաստատմանը ներկայացման վերջնաժամկետը՝ մինչև 2017 թ. հունվարի 31-ը:

3. Սույն թվականի դեկտեմբերի վերջին մասնաճյուղի գիտական խորհրդի նիստում քննարկել մասնաճյուղի 2012-2016թթ. Ռազմավարական պլանի կատարման հիմնական արդյունքների վերաբերյալ հաշվետվությունը:

4. Մասնաճյուղի բոլոր ստորաբաժանումների ղեկավարներին՝ Ռազմավարական պլանի մշակման ընթացքում հանձնախմբին առաջնահերթորեն տրամադրել պահանջվող տեղեկատվական և վերլուծական նյութերը՝ խստորեն պահպանելով դրանց ներկայացման համար առաջադրված ժամկետները:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

Մասնաճյուղի տնօրենի պաշտոնակատար

Ա.Պապոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԳՅՈՒՄՐՈՒ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ՀՊՃՀ /ՀԱՊՀ/ ԳՅՈՒՄՐՈՒ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ 2012-2016ԹԹ.
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՄՓՈՓ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

2016 թ. դրությամբ

Գյումրի 2016

Մասնաճյուղի 2012-2016 թթ. գործունեության վերլուծությունը կատարված է ըստ ռազմավարական պլանով հաստատված նպատակների:

Նպատակ 1. *Ապահովել ուսանողական բավարար համակազմ՝ միջավայրային փոփոխություններին և տարածաշրջանի աշխատուժի պահանջարկին համահունչ, բազմազանեցնել Մասնաճյուղի մուտքային հնարավորությունները:*

Առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշներ

Ցուցանիշ	Արդյունքներ
<p>1. Բացառապես կրթության շուկայի պահանջմունքներով պայմանավորված ընդունելության պլանավորում (մասնագիտությունների անվանացանկ և չափաքանակներ):</p>	<p>Ընդունելության մասնագիտությունների թիվը 2016/2012 թթ. կազմել է՝</p> <ul style="list-style-type: none"> • միջին մասնագիտական (հիմն. կրթ. հիմքով) – 3 / 3 • բակալավր առկա - 6/10 • բակալավր հեռակա - 6/ 6 • մագիստրոս առկա - 4/ 5 • մագիստրոս հեռակա -2/0
<p>2. Հնգամյակի վերջում հեռակա, լրացուցիչ և շարունակական կրթության ծրագրերով առնվազն կրկնապատկված ընդունելություն (2012 թ. ցուցանիշի համեմատ):</p>	<p>Բակալավր հեռակա-56 Մագիստրոս հեռակա-2 Ընդամենը 2016 թ. -58 Ընդամենը 2012 թ. 86 (բակալավր հեռակա 86՝ մագիստրոս 0), նվազել է՝ 33 %-ով,</p>
<p>3. Ընդունելություն հիմնական կրթության հենքով իրականացվող միջին մասնագիտական կրթական ծրագրերով՝ տարեկան 100 - 150:</p>	<p>2016 թ-ին կազմել է 25, 2012 թ.՝ 13, աճել է 92 %-ով</p>
<p>4. Մարզի ավագ դպրոցներում գործող Մասնաճյուղի հենակետային դասարաններ՝ 2-3:</p>	<p>3 - հենակետային դասարաններ ՀԱՊՀ Գյումրու մասնաճյուղի ավագ դպրոցում: Այլ դպրոցներում հենակետային դասարաններ չկան:</p>
<p>5. Մոտակա սփյուռքից ուսանողների թիվը 2016 թ.՝ 80:</p>	<p>Մփյուռքից ուսանող չկա:</p>
<p>6. Ընդունելության ընդհանուր ծավալը 2016 թ. բոլոր կրթական ծրագրերով առնվազն 500:</p>	<p>Ընդունելության ընդհանուր ծավալը 2016 թ. բոլոր կրթական ծրագրերով կազմել է 213 (ավ.դպր.-33, միջ մաս.- 25, բակ.-131, մագ.- 24):</p>

7. Հիմնական և լրացուցիչ կրթական ծրագրերով ուսանողական համակազմը 2016 թ.՝ 2000:	01.11.2016թ. դրությամբ ուսանողների համակազմում գրանցված է 756 սովորող:
--	--

Ընդունելության գործընթացի և ուսանողական համակազմի վերլուծությունից կարելի է կատարել հետևյալ եզրակացությունները.

1. Միջին մասնագիտական կրթական ծրագրով ուսանողական համակազմը 2016 թ. դրությամբ աճել է 92%-ով (13-ից 25 ուսանող): Իրավիճակը բարելավելու նպատակով անհրաժեշտ է միջին մասնագետի կրթական ծրագրով կազմակերպել սպասարկման ոլորտում համեմատաբար մեծ պահանջարկ վայելող մասնագիտությունների ուսուցում: Ռազմավարական պլանում նախատեսված էր հնգամյակի վերջում հեռակա բաժնում ունենալ առնվազն կրկնապատկված ընդունելություն (2012 թ. ցուցանիշի համեմատ): Սակայն 2016 թ. դրությամբ տեղի է ունեցել նվազում 33 %-ով:

2. Լրացուցիչ և շարունակական կրթության ծրագրերով ուսուցման կազմակերպման համար կատարվել է կառուցվածքային փոփոխություն և ստեղծվել Մինչբուհական և շարունակական կրթության բաժանմունք, որը, սակայն, նշված ծրագրերով ակտիվ գործունեություն չի ծավալել:

3. Բակալավրի կրթական ծրագրով Մասնաճյուղի ուսանողական համակազմը առկա ուսուցման համակարգում նվազել է 8%-ով (306-ից 282 ուսանող), իսկ հեռակա ուսուցման համակարգում՝ 26%-ով (432-ից 318): Կարծում ենք՝ իմաստ ունի կատարել հիմնավորված փոփոխություններ մատուցվող մասնագիտությունների ցանկում:

4. ԲԿԾ-ով ընդունելության հոսքի նվազումը հանգեցրել է նաև այդ մասնագիտություններով մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելության թվի անկմանը: Ուստի, անհրաժեշտ է սկսել նոր մասնագիտություններով մագիստրոսական կրթություն իրականացնելու համար լիցենզավորման գործընթաց:

5. 2016թ. դիմորդների պակասի պատճառով ժամանակավորապես դադարեցվել է ընդունելությունը „Տեքստիլ և թեթև արդյունաբերության արտադրանքի նախագծում,, „Չափագիտություն, ստանդարտացում և սերտիֆիկացում (թեթև արդյունաբերության ոլորտում),, մագիստրոսական մասնագիտությունների գծով: Սակայն 2016թ. մագիստրատուրայի ընդունելության համար կրկին վերաբացվել է «072301.01.7 Տեքստիլ և թեթև արդյունաբերության նյութերի և արտադրանքների տեխնոլոգիա, սարքավորումների տեխնիկական շահագործում» կրթական ծրագիրը, որտեղ, որպես հարակից մասնագիտությամբ ավարտածներ, կարող են դիմել նաև «Չափագիտություն, ստանդարտացում և սերտիֆիկացում (թեթև արդյունաբերության ոլորտում)» մասնագիտության շրջանավարտները: 2016թ. դրությամբ պատկերը մագիստրատուրայում հետևյալն է. առկա ուսուցման բաժնում ուսանողների թիվը 2012 թ. նկատմամբ նվազել է 73-ից 38, հեռակա համակարգում 2012 թ. ընդունելություն չի կատարվել, իսկ 2016թ. կազմել է 8:

6. Անհրաժեշտ է ավելի ակտիվ և արդյունավետ դարձնել կապերն ու շփումները Գյումրու և մարզի դպրոցների, տեխնիկական ուղղվածությամբ միջին մասնագիտական հաստատությունների հետ, կազմակերպել և իրականացնել մարզի քոլեջների հետ ծրագրային և ուսում-

նամերթոդական բնույթի համատեղ գործառույթներ, հանդիպումների և ցուցահանդեսային-գովազդային հանդեսների կազմակերպման միջոցով ապահովել բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների հոսքը դեպի Մասնաճյուղ, ընդլայնել պոտենցիալ դիմորդների համար մագիստրատուրայի ընդունելության վերաբերյալ տեղեկատվության ծավալներն ու հասանելիությունը:

7. Գյումրու դպրոցներում և այլ ուսումնական հաստատություններում ու ձեռնարկություններում կազմակերպել ամենամյա ցուցահանդեսներ, փոխադարձ այցելություններ՝ որպես մասնագիտական կողմնորոշման և ընդունելության գովազդի էական մի բաղադրիչ:

8. Վերջին 5 տարվա (2012-2016թթ.) ընդունելության արդյունքների վերլուծությունից պարզ է դարձել, որ Մասնաճյուղի 2012-2016 թթ. Ռազմավարական պլանի Նպատակ 1-ի առաջընթացի գնահատման համար սահմանված կողմնորոշիչ ցուցանիշները իրատեսական չեն և չեն կարող կենսագործվել, ինչը պայմանավորված է ոչ միայն Մասնաճյուղի գործունեությամբ, այլև, հիմնականում, արտաքին գործոններով:

Փալիք հնգամյակը, պայմանավորված տարեցտարի նվազող հանրակրթական շրջանավարտության փաստով, որպես Մասնաճյուղի զարգացման ռազմավարական կարևորագույն և հիմնական խնդիր, կրկին առաջադրելու է հիմնական և լրացուցիչ կրթական ծրագրերով ընդունելության ցուցանիշների բարելավման, դրանց դիվերսիֆիկացման և դրանով իսկ ուսանողների և ունկնդիրների համընդհանուր կազմի առնվազն պահպանման խնդիրը: Մինևույն ժամանակ, կարևորվում է Գյումրի քաղաքի, Շիրակի և այլ մարզերի դպրոցների հետ մշտական աշխատանքը, ինչպես նաև, մարզի սահմաններից դուրս գտնվող ուսանողների և շարունակական կրթության ունկնդիրների ներգրավման ընդլայնումը:

Խիստ կարևորվում է Մասնաճյուղում իրականացվող հանրակրթական ծրագրում ավագ դպրոցից վարժարանային կրթության անցումը (ուսուցման կազմակերպում 5-12 դասարաններում):

Ընդունելության խթան կհանդիսանա նաև Մասնաճյուղի ավագ դպրոցում սովորողների հանրակրթական ծրագրից բակալավրական ծրագրին անցման դյուրինացված (սովորողի համար խթանիչ) ընթացակարգերի հաստատումը:

Նպատակ 2. *Ապահովել բարձրորակ, արդյունավետ և արդիական կրթություն՝ համահունչ ՀՊՃՀ չափորոշիչներին:*

Առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշները

Ցուցանիշ	Արդյունքներ
1. Մասնաճյուղում ուսուցման որակի գնահատման և ապահովման գործող ներքին համակարգ, կրթական ծրագրերի վերլուծության և որակի ամենամյա գնահատման պրակտիկա՝ համահունչ Համալսարանում ընդունված չափանիշների պահանջներին՝ սկսած 2012 թ.:	Մշակվել են ուսուցման որակի գնահատման ներքին համակարգի սկզբունքները, կրթական ծրագրերի իրականացման որակի գնահատման մեխանիզմները, առկա են գնահատման էլեկտրոնային գործիքամիջոցները: Իրականացվել են փորձնական կիրառումներ:

2. Առաջարկվող մասնագիտությունների էապես վերանայված ցանկ՝ համապատասխանեցված աշխատաշուկայի առկա պահանջմունքներին:	Մասնագիտությունների ցանկը պարբերաբար փոխվել է: ՀՀ Կառավարության կողմից հաստատվել է խոշորացված մասնագիտությունների նոր ցանկը:
3. Մասնաճյուղի շրջանավարտներից և կրթական ծրագրերից գործատուների բավարարվածության պարբերական ուսումնասիրություններ՝ սկսած 2012/13 ուստարուց :	Պարբերական հարցումների մեխանիզմ առայժմ չի գործում:
4. Մասնաճյուղի դասախոսական կազմի մանկավարժական գործունեության ամենամյա գնահատման գործող ներքին համակարգ:	ՀԱՊՀ-ում մշակվել է պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության վարկանիշային գնահատման կարգը, որը կիրառվել է 2016 թ.:
5. Ուսումնառությունից Մասնաճյուղի ուսանողների բավարարվածության ամենամյա պարտադիր գնահատման գործող համակարգ՝ սկսած 2012/13 ուստարվանից:	Ամենամյա պարտադիր համակարգ առայժմ չի գործում:
6. Մասնաճյուղի ուսումնական ստորաբաժանումների գործունեության և կրթական ծրագրերի ինքնավերլուծություն՝ ըստ ՄԿՈԱԱԿ-ի սահմանած որակի ապահովման և հավատարմագրման չափանիշների՝ սկսած 2012-2013 ուստարվանից:	Ինստիտուցիոնալ ինքնավերլուծության և արտաքին փորձաքննության արդյունքների հիման վրա ՀԱՊՀ-ն ՄԿՈԱԱԿ-ի կողմից հավատարմագրվել է 4 տարով: ՀԱՊՀ-ն ստացել է նաև ISO 9001 «Որակի կառավարման համակարգերի սերտիֆիկատ»՝ 3 տարի ժամկետով:

Ռազմավարական պլանի պահանջներին համահունչ՝ մշակվել և մասնակիորեն ներդրվել է որակի ներքին ապահովման կազմակերպական սխեմա՝ առանձին վարչական ենթակառուցվածքային միավորների գործառույթների տարանջատմամբ և համապատասխան ընթացակարգերի սահմանմամբ: Համապատասխանաբար, 2012-ից ստեղծվել է կրթության որակի ապահովման և վերահսկման բաժինը իր գործառույթների շրջանակով: Մասնաճյուղի անձնակազմի համար պարբերաբար անցկացվել են կրթության որակի ապահովման և ինստիտուցիոնալ հավատարմագրման տարբեր խնդիրներին ուղղված թեմատիկ կարճաժամկետ վարժանքներ:

Համաձայն Ռազմավարական պլանի պահանջի՝ սկսած 2012թ.-ից, Համալսարանում մեկնարկել է առկա ուսուցման բակալավրական բոլոր կրթական ծրագրերի բովանդակային և կառուցվածքային վերանայման և նոր ծրագրերի ներմուծման փուլային գործընթաց՝ կրթական վերջնարդյունքներով պայմանավորվող «Թյունինգյան» մեթոդաբանության չափանիշներին և աշխատաշուկայի արդի պահանջմունքներին համահունչ: Գործընթացում

հնարավորինս ներգրավվել են հիմնական պատվիրատու կազմակերպությունների ներկայացուցիչներ, ուսանողներ և շրջանավարտներ:

Մասնաճյուղը, կրթության որակի ապահովման և զարգացման նպատակով ստանալով աջակցություն ՀԱՊՀ Երևանյան կրթահամալիրից, ներկայումս հաջողությամբ իրականացնում է տեղեկատվական ռեսուրսների ձեռքբերում, անձնակազմի վերապատրաստում և այլն:

Վերոնշյալ աշխատանքի իրականացման արդյունքում ստեղծվում են բարենպաստ պայմաններ Մասնաճյուղում կրթության որակի բարելավման համար, ինչը նպաստում է ժամանակակից կրթական մշակույթի ձևավորմանը:

Մշակվել և 2016 թ. Մասնաճյուղում կիրառվել է դասախոսական կազմի գործունեության տարեկան վարկանիշային գնահատման կարգը:

2016թ. իրականացվել են հարցումներ ուսումնառությունից շրջանավարտների, շրջանավարտներից՝ գործատուների բավարարվածության վերաբերյալ:

Իրականացվել է ինստիտուցիոնալ ինքնավերլուծություն՝ գնահատելով Մասնաճյուղի գործունեության արդյունքները: Ինքնավերլուծության և դրան հաջորդած արտաքին փորձագիտական ուսումնասիրության արդյունքների հիման վրա ՄԿՈԱԱԿ-ի հավատարմագրման հանձնաժողովի 2016թ. փետրվարի 21-ի №3 որոշմամբ ՀԱՊՀ-ին, այդ թվում՝ Գյումրու մասնաճյուղին, շնորհվել է ինստիտուցիոնալ հավատարմագրում՝ 4 տարի ժամկետով:

Եվրոպական զարգացումներին և աշխատաշուկայի փոփոխվող պահանջումներին համահունչ, բարձրորակ, արդյունավետ և արդիական կրթության ապահովման անհրաժեշտությամբ պայմանավորված, առկա կրթական ծրագրերի բովանդակային և կառուցվածքային վերանայման և նոր ծրագրերի ներմուծման փուլային գործընթացի շարունակումը, ինչպես նաև ուսուցման որակի գնահատման և ապահովման ներհամալսարանական համակարգի լիարժեք ներդրման և պարբերական լավարկման հիմնախնդիրները դարձյալ պահպանվում են որպես Մասնաճյուղի զարգացման առաջնահերթ ռազմավարական խնդիրներ:

Նպատակ 3. *Ապահովել որակյալ կադրային ներուժ, Մասնաճյուղի արդյունավետ կառավարում և գործունեություն ՀՊՃՀ կազմում, հակակոռուպցիոն միջավայրի ձևավորում:*

Առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշներ

Ցուցանիշ	Արդյունքներ
1. Գիտական աստիճաններ ունեցող հիմնական պրոֆեսորադասախոսական կազմի հաշվեկշիռը՝ առնվազն 65% :	Աստիճանակիր դասախոսների հաշվեկշիռը կազմում է 72 % (հիմնական կազմում):
2. Պրոֆեսորադասախոսական կազմի գնահատման ռեյթինգային համակարգի առկայություն:	ՀԱՊՀ-ում մշակված և հաստատված է գիտական խորհրդի կողմից պրոֆեսորադասախոսական կազմի գնահատման ռեյթինգային համակարգը:
3. Պրոֆեսորադասախոսական տարակարգերի համար աշխատավարձերի	Աշխատավարձերի սանդղակները տարակարգված են ըստ կրթական

տարբերակված սանդղակներ՝ կախված դասախոսի ռեյթինգից:	ծրագրերի և ժամարժեքների, դասախոսի ռեյթինգը հաշվի չի առնվում:
4. ՀՀ պաշտոնական միջին աշխատավարձի 150% -ը կազմող պրոֆեսորադասախոսական կազմի միջին աշխատավարձ – 2016 թ.:	2012 թ. ՀՀ պաշտոնական միջին աշխատավարձը կազմում է 107000 դրամ, Մասնաճյուղի պրոֆ.դասախոսական կազմի միջին աշխատավարձը 2016թ. կազմել է 112230 դրամ:
5. Պրոֆեսորադասախոսական կազմի միջին տարիքի նվազեցում՝ 2016 թ. 2012-ի համեմատ առնվազն 10%-ով:	2012 թ. պրոֆեսորադասախոսական կազմի միջին տարիքը եղել է 51.5, 2016 թ. կազմել է 57.1: Աճել է 10,9%-ով:
6. Ուսանող/դասախոս քանակական հարաբերակցությունը՝ 12:1:	2016 թվին հարաբերակցությունը կազմում է 12: 1 (756/64):
7. Ուսանող/աշխատող քանակական հարաբերակցությունը՝ առնվազն 6:1:	2016 թ. դրությամբ հարաբերակցությունը կազմում է 5: 1 (756/155):
8. Մասնաճյուղի գործունեության գնահատման առանցքային ցուցանիշների (ԳԱՑ) համակարգ:	Առկա է գործունեության հիմնական ոլորտների գնահատման ցուցանիշների համակարգ, որը հաստատագրված ԳԱՑ-երի համակարգի վերածման կարիք ունի:
9. Տարեկան հաշվետվության նոր ձևաթերթեր՝ ՀՊՃՀ գործունեության ԳԱՑ-երի հիման վրա:	Տարեկան հաշվետվության ձևաթերթերը 2 անգամ փոփոխվել են՝ ԳԱՑ-երի մասնակի կիրառմամբ:
10. Գործուն հակակոռուպցիոն քաղաքականություն՝ դրա իրականացմանը նպաստող պայմանների, մեխանիզմների և գործընթացների համակարգով:	Գործում է 2010թ. մշակված և ՀԱՊՀ Գիտական խորհրդի կողմից հաստատված հակակոռուպցիոն միջոցառումների պլան-ծրագիրը, ինչպես նաև թափանցիկության ապահովմանն ուղղված մի շարք այլ միջոցառումներ:

Դիտարկվող ժամկետում գրանցվել է Մասնաճյուղի հիմնական պրոֆեսորադասախոսական կազմի միջին տարիքի աճ 10,9%-ով: Գիտական աստիճան ունեցող հիմնական պրոֆեսորադասախոսական կազմի հաշվեկշիռը կազմել է 72%՝ ապահովելով Ռազմավարական պլանով նախանշված առնվազն 65% ցուցանիշի կատարողականը:

Մինևույն ժամանակ, արձանագրվել է պայմանագրային, համատեղությամբ և ժամավճարային հիմունքով ձևակերպված դասախոսական կազմի նվազում, սակայն աճել է աշխատանքային պայմանագրով ձևակերպվածների թիվը: Ընդհանուր առմամբ տեղի է ունեցել հիմնական դասախոսական կազմի 12,3%-ի չափով նվազում՝ 73-ից (2012 թ.) մինչև 64 (2016 թ.):

Աճել է նաև դասախոսական կազմի միջին տարիքը՝ 51.5-ից հասնելով 57.1:

Ուսանողների և դասախոսական հաստիքների թվերի նվազմանը համընթաց՝ արձանագրվել է նաև ուսանող/դասախոս հարաբերակցության պահպանում: Այն 2012 թվից ի վեր աճել է 10:1-ից (935/90)՝ հասնելով 12:1-ի (առավելապես՝ դասախոսների քանակի կրճատման

պատճառով): Ռազմավարական պլանով նույնպես նախատեսված էր ապահովել 12:1 հարաբերակցությունը, սակայն ոչ թե դասախոսների թվի կրճատման, այլ ուսանողների թվի ավելացման հաշվին: Ուսանողների թվի նվազման պատճառով հարաբերականորեն նվազել է նաև ուսանող/աշխատող քանակական հարաբերակցությունը՝ հասնելով 5:1 -ի:

Ուսանողների թվի նվազումը Մասնաճյուղում ազդել է նաև Ռազմավարական պլանով նախատեսված մեկ այլ կարևոր ցուցանիշի վրա: Պրոֆեսորադասախոսական անձնակազմի աշխատավարձի միջին չափը 2012 թ. համեմատ Մասնաճյուղում բարձրացել է 20 %-ով, սակայն չի կատարվել միջին աշխատավարձի բարձրացումը մինչև ՀՀ պաշտոնական միջին աշխատավարձի 150%, այսինքն՝ **160000** դրամը:

Ռազմավարական պլանով ընդգրկված ժամանակահատվածում Մասնաճյուղի կառավարման համակարգում տեղի են ունեցել որոշակի փոփոխություններ՝ պայմանավորված ներքին և արտաքին մի շարք հանգամանքներով: Մասնավորապես, փոխվել է Համալսարանի իրավական կարգավիճակը՝ «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան (Պոլիտեխնիկ)» **պետական ոչ առևտրային կազմակերպությունը** ՀՀ կառավարության 2014 թ. նոյեմբերի 13-ի N 1290-Ն որոշմամբ վերակազմավորվեց «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» (ՀԱՊՀ) **հիմնադրամի** և հաստատվեց ՀԱՊՀ հիմնադրամի, իսկ 2016 թ. փետրվարի 5-ի նիստի թիվ 02/16-03 որոշմամբ՝ նաև Գյումրու մասնաճյուղի Կանոնադրությունը:

Զնայած կատարված փոփոխություններին՝ մշտապես ապահովվել է ՀԱՊՀ-ի և Մասնաճյուղի Գիտական խորհուրդների և կառավարման մյուս մարմինների ներդաշնակ գործունեությունը, կարևոր որոշումները զետեղվել են Համալսարանի և Մասնաճյուղի կայքերում: 2012-ից սկսած՝ կատարվել է անցում էլեկտրոնային ներքին կառավարմանը. տեղադրվել է փաստաթղթաշրջանառության «Mulberry» առցանց համակարգը:

Բոլոնիայի սկզբունքներին համահունչ՝ ընդլայնվել և խորացել է ուսանողների մասնակցությունը Համալսարանի կառավարման և որոշումների կայացման գործընթացներում: Էապես մեծացել է ՀԱՊՀ-ի համալսարանական և տեղային ուսանողական խորհուրդների դերը փոփոխությունների պլանավորման և իրականացման գործընթացներում՝ զարգացնելով ուսանողական ինքնավարությունը Մասնաճյուղում: Ուսխորհուրդն ակտիվորեն մասնակցել է Երևանյան կրթահամալիրի և Գյումրու մասնաճյուղի, Հայաստանի երիտասարդական կազմակերպությունների և ՀԿ-ների նախաձեռնած բազմաթիվ միջոցառումների՝ պատշաճ ներկայացնելով Մասնաճյուղը:

ՀԱՊՀ համակարգում վարվել է կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանն ուղղված քաղաքականություն, որի իրականացման համար ձևավորվել են համապատասխան պայմաններ և մեխանիզմներ՝ համաձայն Գիտական խորհրդի կողմից հաստատված հակակոռուպցիոն միջոցառումների պլան-ծրագրի: Հակակոռուպցիոն միջավայրի ձևավորմանն ու ամրապնդմանն են ծառայել նաև Մասնաճյուղում իրականացվող թափանցիկության ապահովմանն ուղղված այնպիսի միջոցառումներ, ինչպիսիք են հանձնաժողովային գրավոր քննությունների անցկացումը, դրանց մշտադիտարկումների կիրառումը, ուսանողի կողմից իր ստացած գնահատականի բողոքարկման հստակ մեխանիզմների ներդրումը, ուսանողների լայնամասշտաբ ներգրավումը տարբեր հանձնաժողովների կազմում, ներքին կառավարման, հարցերի քննարկման և որոշումների կայացման գործընթացներում և այլն: Արդյունքում, հաշվետու

Ժամանակահատվածում Մասնաճյուղում կոռուպցիայի դեպքեր կամ դրանց վերաբերյալ բողոքներ չեն արձանագրվել:

Մասնաճյուղի կադրային ներուժի որակական ցուցանիշների մշտալավարկման, ներուժի օպտիմալ պլանավորման և արդյունավետ օգտագործման, ինչպես նաև կառավարման արդյունավետության բարձրացման խնդիրները շարունակում են մնալ Մասնաճյուղի ռազմավարական թիրախների ցանկում:

Նպատակ 4. *Կրթական և հետազոտական ծրագրերի պահանջներին համահունչ՝ կատարելագործել Մասնաճյուղի նյութատեխնիկական բազան, զարգացնել սոցիալական ծրագրերն ու բարելավել ինֆրակառուցվածքը:*

Առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշներ

Ցուցանիշ	Արդյունքներ
1. Նյութատեխնիկական բազայի համապատասխանությունը պետական կրթական չափորոշիչների պահանջներին:	Նյութատեխնիկական բազան գործնականում համապատասխանում է պետական կրթական չափորոշիչների պահանջներին:
2. Մասնաճյուղի նյութատեխնիկական բազայի զարգացման հեռանկարային և տարեկան պլանների առկայություն և կատարողական:	Իրականացվում է համաձայն յուրաքանչյուր տարվա նախահաշվում հատկացված գումարների:
3. Մեկ ուսանողին ընկնող օգտակար մակերեսները՝ ոչ պակաս քան պետական նորմատիվով սահմանված 8 ք.մ:	Մեկ ուսանողին ընկնող օգտակար մակերեսը՝ 6,8 ք.մ:

Մասնաճյուղի նյութատեխնիկական բազայի բարելավմանը նպատակաուղղված և Ռազմավարական պլանով նախատեսված առաջադրանքները 2012-2016 թթ. ընթացքում որոշակի առաջընթաց են ապրել, հատկապես Մասնաճյուղի լսարանային ֆոնդի բարեկարգման շնորհիվ: Բարձրացել է նաև մեկ ուսանողին ընկնող օգտակար մակերեսի ցուցանիշը ոչ թե մակերեսների ավելացման, այլ ուսանողների թվի նվազման հետևանքով: Մասնավորապես, օգտակար ուսումնական մակերեսի ցուցանիշն աճել է 23% (2012 թ.՝ 5.11 ք.մ – 935 ուսանողի համար, 2016 թ.՝ 6.3 ք.մ – 756-ի):

Այսպիսով, Մասնաճյուղի կրթական և հետազոտական պահանջներին համահունչ, նյութատեխնիկական բազայի ապահովման, ինչպես նաև սոցիալական ծրագրերի զարգացման ու համապատասխան ինֆրակառուցվածքի պահպանման և հետագա զարգացման խնդիրները գրեթե ամբողջությամբ շարունակում են մնալ Մասնաճյուղի գալիք ռազմավարական մարտահրավերների շարքում, որպես հրամայականը չկորցրած խնդիրներ:

Նպատակ 5. Պահպանել ՀՊՃՀ Գյումրու մասնաճյուղի ֆինանսական կայունությունը և ռեսուրսների արդյունավետ կառավարումը

Առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշներ

Ցուցանիշ	Արդյունքներ
2016 թվականին՝ արտաբյուջետային մուտքերի աճը 2012 թ. համեմատ՝ առնվազն 20%:	2012 թ. համեմատ արտաբյուջետային մուտքերը նվազել են 16,5 %-ով:
2012 թ. վերջում ստեղծել կայունացման ֆոնդ՝ առնվազն 20 մլն դրամի սահմաններում և մինչև 2016 թ.-ը այդ ֆոնդին փոխանցել յուրաքանչյուր տարվա տարեկան բյուջեի առնվազն 5%-ը:	Կայունացման ֆոնդը 2016 թ. տարեվերջին կազմեց 63 մլն. դրամ, այսինքն աճել է 3,15 անգամ:
Զարգացմանն ուղղվող միջոցների հաշվեկշիռը (ներառյալ կառուցվածքային ստորաբաժանումների ֆոնդերի մասհանումները)՝ առնվազն 10%:	Զարգացմանն ուղղվող միջոցների հաշվեկշիռը կազմում է 0,02% (սարք-սարքավորումներ, ոչ ընթացիկ ակտիվներ և այլն):
Ինֆրակառուցվածքի պահպանմանն ուղղվող միջոցների հաշվեկշիռը՝ առնվազն 10%:	Կապիտալ և ընթացիկ վերանորոգումներ՝ 0,9 %:
Աշխատողների միջին ամսական աշխատավարձի աճը՝ առնվազն 20%:	2016 թ. աշխատողների միջին ամսական աշխատավարձը 2012 թ. նկատմամբ աճել է՝ պրոֆեսորադասախոսական անձնակազմինը՝ 1,2, այլ աշխատողներինը՝ 1,5 անգամ:
Աշխատավարձի և սոցիալապահովման տոկոսային բաժնեմասը 2012 թ. բյուջեով կազմող 80%-ից մինչև 2016 թ.-ը նվազեցնել առնվազն 10%-ով (ցուցանիշը դարձնել 70%)՝ հաստիքների օպտիմալացմամբ և աշխատավարձին ուղղված միջոցների արդյունավետ օգտագործմամբ:	Աշխատավարձի տոկոսային բաժնեմասը 2016 թ. բյուջեով կազմել է 86 %:
Ուսանողներին հատկացվող ֆինանսական օգնության (ներառյալ ուսման վարձերի զեղչերը) և Մասնաճյուղի վճարովի ուսուցումից արտաբյուջետային մուտքերի հարաբերությունը՝ 1/10:	Ուսանողներին հատկացվող ֆինանսական օգնությունները և զեղչերի գումարը կազմում է ուսման վարձերից մուտքերի 1/12 հարաբերություն:

Մասնաճյուղի ֆինանսական գործունեության արդյունքները դիտարկելով 2012-2016 թթ. Ռազմավարական պլանով առաջադրված խնդիրների տեսանկյունից՝ կարելի է նշել, որ դրանք, ընդհանուր առմամբ, համահունչ են եղել առաջադրված պահանջներին և նպաստել են Մասնաճյուղի ֆինանսական կայունության ամրապնդմանը: Ֆինանսական գործունեության հիմնական խնդիրները հանգել են ֆինանսական պլանավորման ներդաշնակեցմանը Մասնաճյուղի ռազմավարական նպատակներին և խնդիրներին, ֆինանսական միջոցների ներհոսքի մեծացմանն ու դրանց աղբյուրների բազմազանեցմանը, ինչպես նաև ֆինանսական ռեսուրսների կառավարման ու օգտագործման արդյունավետության բարձրացմանը: Արդյունքում, մինչև 2016 թվականը արձանագրվել է հետևյալ պատկերը.

- Արտաբյուջետային մուտքերը 2012 թ. համեմատ 2016 թ. նվազել են 16,5%-ով՝ պլանավորված առնվազն 20% աճի փոխարեն: Այս ցուցանիշը պայմանավորված է ուսանողական համակազմի նվազմամբ և 2016 թվականին ուսանողներին տրամադրվող ուսման վարձի լրիվ և մասնակի փոխհատուցումների աճով:

- Պլանով նախատեսված կայունացման ֆոնդի հաշվեկշռի ավելացումը 2012թ. համեմատ Մասնաճյուղում ապահովվել է էական աճով՝ 3,15 անգամ:

- Զարգացմանն ուղղվող միջոցների հաշվեկշիռը (ներառյալ կառուցվածքային ստորաբաժանումների ֆոնդերի մասհանումները), պլանով նախատեսված առնվազն 10% կողմնորոշիչ ցուցանիշի դիմաց, կազմել է 0,02%: Զնայած պահանջված մակարդակին հասնելը Մասնաճյուղի համար ներկա պայմաններում բարդ է, այնուամենայնիվ, շնորհիվ դրամաշնորհների և գիտահետազոտական ծրագրերի իրականացման, գրանցվել է տվյալ ցուցանիշի բարելավում, և այն դիտարկվում է որպես առաջնային խնդիր բուհում՝ հետագա հնգամյակում լուծելու համար:

- Ինֆրակառուցվածքի պահպանմանն ուղղված միջոցների հաշվեկշիռը 2016թ.-ին նվազել է՝ կազմելով 0.9%:

- Ուսանողներին հատկացվող ֆինանսական օգնություն/վճարովի ուսուցումից արտաբյուջետային մուտքեր 1/10 հարաբերակցության ապահովման հանձնարարականը չի կատարվել 2016թ.-ին ուսանողներին հատկացված ֆինանսական օգնությունը կազմել է ուսման վարձերով պլանավորված մուտքերի 8%-ը:

Ամփոփելով Մասնաճյուղի Ռազմավարական պլանով նախանշված ֆինանսական գործունեության արդյունքները՝ ըստ առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշների կատարողականի, հարկ է նշել, որ Մասնաճյուղի ֆինանսական կայունությանն ու ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացմանն ուղղված՝ վերը նշված խնդիրները պահպանել են իրենց ռազմավարական կարևորությունը մոտակա տարիների համար ևս, բնականաբար, վերանայված ըստ քանակական նոր ցուցանիշների, միջավայրային սպասվելիք փոփոխություններին համահունչ:

Նպատակ 6. *Ապահովել Մասնաճյուղի ինֆորմացիոն ռեսուրսների զարգացումը, կրթական, գիտական և կառավարման գործընթացներում ինֆորմացիոն տեխնոլոգիաների կիրառության շրջանակների ընդլայնումը:*

Առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշներ

Ցուցանիշ	Արդյունքներ
1. Մասնաճյուղի համակարգիչների թիվը՝ առնվազն 200 (5 ուսանողին 1 համակարգիչ):	Համակարգիչների ընդհանուր քանակը Մասնաճյուղում 158 է, որոնցից ուսումնական գործընթացում կիրառվում է 118-ը (6 ուսանողին 1 համակարգիչ):
2. Մասնաճյուղի մասնաշենքերում բոլոր ամբիոնների ու բաժինների համար անլար ինտերնետային կապ:	Մասնաճյուղի մասնաշենքերում առկա Wi-Fi ինտերնետ կապի հնարավորություն:
3. Ինտերնետին միացված համակարգիչների հաշվեկշիռը՝ առնվազն 80%:	2016 թ. դրությամբ Ինտերնետին միացված համակարգիչների հաշվեկշիռը կազմում է՝ մոտ 40%:
4. Մուլտիմեդիական միջոցների հավաքածուով հագեցված 12 լսարան:	Ներկայումս Մասնաճյուղում կա տարբեր աստիճանի մուլտիմեդիական միջոցներով հագեցած 5 լսարան:
5. Ինտերնետի կիրառմամբ ուսուցման (on-line) 8 լսարան:	Մասնաճյուղն ունի Ինտերնետի կիրառմամբ ուսուցման 6 լսարան, որից մեկի հագեցվածությունը թույլ է տալիս օգտագործել այն նաև հեռաուսուցման և գիտաժողովների (on-line) անցկացման համար:
6. Էլեկտրոնային տարբերակով ուսումնական նյութեր՝ դասընթացների առնվազն 50%-ի համար:	2016 թ. դրությամբ պատրաստ է դասավանդվող առարկաների էլեկտրոնային կրթական նյութերի մոտ 70%-ը:
7. Մասնաճյուղի գրադարանի ռեսուրսների էլեկտրոնային կատալոգ:	Էլեկտրոնային կատալոգի ստեղծումը ընթացքի մեջ է:
8. Գրադարանում ուսանողների օգտագործման էլեկտրոնային ընթերցասրահ՝ անլար ինտերնետային կապով:	Գրադարանի ընթերցասրահում գործում է Ինտերնետային կապը, 2017 թ. գործելու է նաև էլեկտրոնային ընթերցասրահը:
9. Մասնաճյուղի միասնական հեռահաղորդակցական տեղեկատվական համակարգ:	Մասնաճյուղը միացված է ՀԱՊՀ-ի միասնական հեռահաղորդակցական տեղեկատվական համակարգին:
10. Վիրտուալ միջավայրում և Գյումրու Տեխնոլոգիական կենտրոնում կատարվող լաբորատոր աշխատանքներ և գիտական փորձարարական հետազոտություններ՝ առնվազն 50%:	2016 թ. դրությամբ վիրտուալ միջավայրում կատարվող լաբորատոր աշխատանքները և գիտական փորձարարական հետազոտությունները կազմում են մոտ 50%:
11. Մասնաճյուղի առանձին եռալեզու Web-կայք՝ տեղադրված Համացանցում:	Գործում է Մասնաղյուղի Web-կայքը՝ առայժմ միայն հայերեն լեզվով:

2016 թվականին ֆրանսիական «Հայմեդ» բարեգործական կազմակերպության նվիրատվությամբ կահավորվել է համակարգչային դիզայնի լաբորատորիա՝ 9 համակարգիչներով

(բոլորը միացված Մասնաճյուղի համակարգչային ցանցին) և A3 ձևաչափի բարձրորակ գունավոր տպիչով: 2016թ. դրությամբ Մասնաճյուղում եղել է 158 համակարգիչ՝ ներառյալ ՆԳՄՏ ամբիոնին կից եռաչափ մոդելավորման լաբորատորիայում տեղակայված 10 համակարգիչները, որոնք չեն պատկանում Մասնաճյուղին, սակայն անվարձահատույց օգտագործվում են ուսումնական գործընթացում: Օգտագործվող համակարգիչների ընդհանուր քանակն ամբիոններում՝ 127, ՀԱՊՀ ցանցին միացած համակարգիչներ չկան:

Ուսումնական գործընթացում օգտագործվող համակարգիչների քանակն ամբիոններում՝ 118: Վարչական նպատակով օգտագործվող համակարգիչների քանակը (տնօրինություն, բաժիններ, դեկանատներ, ամբիոններ)՝ 31:

Մասնաճյուղին պատկանող էլեկտրոնային փոստի հասցեները seua.am դոմենում՝ 24:

2015 թ.-ի մարտին շահագործման է հանձնվել Մասնաճյուղի նոր կայքէջը՝ <http://polytechgyumri.am/>, որի այցելությունների թիվը շահագործման 20 ամսվա ընթացքում գերազանցել է 8320-ը: Կայքում տեղադրվում է՝

- տեղեկատվություն բուհի կառուցվածքի, ֆակուլտետների և ամբիոնների մասին,
- թարմացվող տեղեկատվություն բուհի առօրյայի մասին, հայտարարություններ և նորություններ,
- գիտխորհրդի որոշումներ. ուղեցույցներ, դասատախտակներ, քննատախտակներ և այլն,
- Մասնաճյուղում դասավանդվող առարկաների քննական հարցաշարեր և կրթական ռեսուրսներ (2016 թ. դրությամբ 66 անուն կրթական ռեսուրս և 198 հարցաշար):

Կայքի տեղեկատվության թարմացումը կրում է ամենօրյա բնույթ:

Մասնաճյուղի աշխատակիցների համար նոր էլեկտրոնային հասցեների ստացման հնարավորություն է ստեղծված Մասնաճյուղին պատկանող [polytechgyumri.am/](mailto:polytechgyumri.am) դոմենում, որտեղ արդեն բացված է 40 հասցե: Գրանցման հնարավորությունների թիվը Մասնաճյուղի աշխատակիցների համար գործնականում անսահմանափակ է:

2012 թվականից կառուցվում է Մասնաճյուղի նոր կորպորատիվ ցանցը, որտեղ դրվել է համացանցի հասանելիության ընդլայնման և կապի որակի բարելավման խնդիր: Մասնաճյուղի բոլոր մասնաշենքերում ապահովված է համացանցի հասանելիություն՝ Wi-Fi տեխնոլոգիայով, մուտքն իրականացվում է օգտատերի գաղտնաբառի օգտագործմամբ: Հիմնական ստորաբաժանումների և համակարգչային սրահների համար ապահովվել է Մասնաճյուղի ցանցին միացման մալուխային եղանակ, որը ապահովում է առավել արագ և կայուն կապ:

Մասնաճյուղի կապը համացանցի հետ իրականացվում է Վիվա-Սել-ՄՍՍ ընկերության օպտոմանրաթելային մալուխով՝ 25 Մբտ/վ արագությամբ:

Չնայած որոշ բարելավումներին՝ ուսումնական գործընթացում օգտագործվող համակարգիչների թվում դեռևս զգալի մաս են կազմում հին սերնդի համակարգիչները, որոնք չեն կարող կիրառվել հատկապես նոր՝ SS ոլորտի մասնագիտություններով կազմակերպվող ուսումնական գործընթացում՝ դրանց տեխնիկական ցածր ցուցանիշների պատճառով:

Ներկայումս ամբիոնների էլեկտրոնային ուսումնական նյութերի զգալի մասը տեղադրված են գրադարանի համակարգիչում և Մասնաճյուղի կայքում՝ ամբիոնի համար նախատեսված էջում: Ամբիոններում տվյալ կիսամյակում դասավանդվող առարկաների հիմնական

մասի քննական հարցաշարերը տեղադրված են Մասնաճյուղի կայքում: Սակայն անբավարար է դասախոսությունների, գործնական ու լաբորատոր աշխատանքների վարման էլեկտրոնային ինտերակտիվ նյութերի քանակը:

Անփոփելի առկա արդյունքները՝ հարկ է նշել, որ տեղեկատվական ռեսուրսների զարգացման և տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառության շրջանակների ընդլայնման խնդիրները շարունակում են մնալ Մասնաճյուղի ռազմավարական առաջնահերթությունների ցանկում: Մասնավորապես, հաջորդ հնգամյակում խիստ կարևորվում են Մասնաճյուղի կրթական, հետազոտական և վարչարարական հիմնական գործառնությունների էլեկտրոնային կառավարման միջոցներով ավտոմատացման և դրանց որակի վերահսկման առցանց համակարգերի զարգացման ու լիարժեք շահագործման համար անհրաժեշտ տեխնիկական պայմանների ապահովումը, դասավանդման և ուսումնառության նորագույն տեխնոլոգիաների մատչելիության ապահովումը թե՛ դասախոսների, թե՛ ուսանողների համար, ինչպես նաև էլեկտրոնային գրադարանային ցանցի հետագա զարգացման հիմնախնդիրները:

Նպատակ 7. Ապահովել Մասնաճյուղի գիտական ներուժի կայուն զարգացումը, բարձրացնել հետազոտությունների արդյունավետությունն ու ինովացիոն մրցունակությունը

Առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշներ

Ցուցանիշ	Արդյունքներ
1. Թեկնածուական 13 և դոկտորական 2 ատենախոսությունների պաշտպանություն:	Պաշտպանվել են ատենախոսություններ՝ - թեկնածուական՝ 9, - դոկտորական՝ 1:
2. Գիտական աստիճան ունեցողների հաշվեկշիռը Մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական կազմում՝ առնվազն 65%:	Պրոֆեսորադասախոսական անձնակազմի թիվը՝ 64, որից աստիճան ունեցողներինը՝ 46, այսինքն՝ 72%:
3. Պրոֆեսորային գիտահետազոտական լաբորատորիայի ստեղծում՝ առնվազն 2:	Ստեղծվել է 1 պրոֆեսորային գիտահետազոտական լաբորատորիա:
4. Ֆինանսավորվող հետազոտական նախագծերի թիվը՝ առնվազն 8, տարեկան ֆինանսավորման ծավալը՝ առնվազն 10 մլն դրամ:	Ֆինանսավորվող հետազոտական նախագծերի թիվը 2016 թ. դրությամբ կազմել է 6, տարեկան ֆինանսավորման ծավալը՝ 10,935 մլն դրամ:
5. Հրատարակված գիտական հոդվածների թիվը՝ առնվազն 370:	Հրատարակված գիտական հոդվածների թիվը կազմել է 234:
6. Ստացված գյուտերի արտոնագրերի թիվը՝ առնվազն 22:	Ստացված գյուտերի արտոնագրերի թիվը 35 է:

Մասնաճյուղի գիտահետազոտական գործունեությունը 2012-2016թթ. ծավալվել է Ռազմավարական պլանի Նպատակ 7-ով առաջադրված խնդիրներին համապատասխան. ճարտարագետ-գիտնականների նոր սերնդի ձևավորում, հետազոտական ծրագրերում դասախոսական կազմի, ասպիրանտների ներգրավվածության և հետազոտական ծրագրերի տեսակների ու ֆինանսավորման ծավալների աճի ապահովում, կիրառական հետազոտությունների արդյունավետության բարձրացում, միջազգային գիտական ծրագրերում Համալսարանի գործունեության ընդլայնման և ինովացիոն գործունեության համար նպաստավոր պայմանների ստեղծում:

Նախորդ 5 տարում Մասնաճյուղում կատարվել է ֆինանսավորվող գիտահետազոտական 6 ծրագիր՝ 10,93 մլն դրամ ընդհանուր գումարով, սակայն հրատապ է պրոբլեմային ևս 1-2 լաբորատորիայի կազմակերպման խնդիրը:

Մասնաճյուղում կատարվող գիտական հետազոտությունների արդյունքներով պաշտպանվել են թեկնածուական 9 և դոկտորական 1 ատենախոսություններ, հրատարակվել 234 գիտական հոդվածներ:

Էապես ակտիվացել է Մասնաճյուղի գյուտարարական գործունեությունը, ստացվել է գյուտերի 35 արտոնագիր, սակայն շատ քիչ աշխատակիցներ են զբաղվում գյուտարարական գործունեությամբ: Անհրաժեշտ է ընդլայնել ամբիոնների գիտական համագործակցությունը Համալսարանի Երևանյան կրթահամալիրի ամբիոնների հետ, հնարավորինս ընդգրկվել Համալսարանի ֆինանսավորվող գիտական նախագծերում, կատարել համատեղ հետազոտություններ:

Մասնաճյուղի ամբիոնների գիտահետազոտական գործունեությանը խոչընդոտում են նաև հետազոտական լաբորատորիաների և ժամանակակից գիտական սարքավորումների բացակայությունը, մակերեսների սղությունը: Խիստ անհրաժեշտ է բարելավել Մասնաճյուղի շենքային պայմանները և ստեղծել գիտական հետազոտությունների կատարման պատշաճ պայմաններ:

Մասնաճյուղի գիտական ներուժի կայուն զարգացումը, և հատկապես հետազոտությունների արդյունավետությունը, արդյունքների առևտրայնացումը և ինովացիոն մրցունակության բարձրացումը մնում են Մասնաճյուղի զարգացման մոտակա կարևորագույն ռազմավարական խնդիրների շարքում՝ որպես նրա ընդհանուր հզորացման և ֆինանսական լուրջ ներհոսքերի ապահովման գրավական:

Նպատակ 8. Արտաքին կապերի ընդլայնում, Մասնաճյուղի միջազգայնացման գործընթացների զարգացում և ամրապնդում:

Առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշներ

Ցուցանիշ	Արդյունքներ
1. Մասնաճյուղում նորովի գործող «Համալսարան-արդյունաբերություն» փոխկապակցության կառույց, հիմնական պատվիրատու կազմակերպությունների	Կառույցը դեռևս ստեղծված չէ:

վերաբերյալ տարեկան պարբերականությամբ թարմացվող տվյալների բազա (2011/2012 ուստարուց):	
2. Մասնաճյուղի հետ համագործակցող գործընկեր ձեռնարկությունների թիվը (ըստ կնքված պայմանագրերի)՝ 50-60:	Կնքված պայմանագրերի թիվը կազմում է 30:
3. Մասնաճյուղի շրջանավարտների տվյալների բազա՝ էլեկտրոնային կապի հնարավորություններով:	Էլեկտրոնային բազան դեռևս ստեղծված չէ:
4. Արտասահմանյան, այդ թվում՝ նաև ԱՊՀ երկրների հաստատությունների հետ գործընկերային կապերի թիվը՝ ըստ գործող պայմանագրերի 2016 թվին՝ 10-12:	Ներկայումս Մասնաճյուղը կապի մեջ է 6 արտասահմանյան (այդ թվում՝ նաև ԱՊՀ) երկրների հաստատությունների հետ:

Մասնաճյուղը հաշվետու ժամանակահատվածում կնքել է գիտակրթական համագործակցության պայմանագրեր ու համաձայնագրեր հետևյալ միջազգային հաստատությունների հետ. Քուրախիսի Ա. Ծերեթելու անվան պետական համալսարան (3 տարի ժամկետով), Կիևի տեխնոլոգիայի և դիզայնի ազգային համալսարան (5 տարի ժամկետով), Ուրալի Դաշնային համալսարան (5 տարի ժամկետով), ընդ որում, **պայմանագիրը** կնքվել է ՀԱՊՀ-ի հետ՝ ընդգրկելով Մասնաճյուղն այդ պայմանագրում:

Կնքվել են նաև պայմանագրեր տեղական կազմակերպությունների հետ. Երևանի «Նարեկ» գիտահետազոտական ՓԲԸ (3 տարի ժամկետով), Գյումրու «Ինստիգեյթ» ՓԲԸ (3 տարի ժամկետով), «Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ (1 տարի ժամկետով), «Ֆերտի» Բարեգործական կենտրոն ՀԿ (3 տարի ժամկետով), «**Դ-Լինկ** Ինթերնեյշնլ» ՊՏԵ ԼՏԴ հայաստանյան ներկայացուցչություն (3 տարի ժամկետով):

2014թ. Մասնաճյուղը կնքել է համագործակցության Համաձայնագիր Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպության հետ՝ Եվրամիության «Էրազմուս+» ծրագրի շրջանակներում կազմակերպվող ԵՆԿ ՀԿ գործընկերային ծրագրերին (միջազգային դասընթացներ, երիտասարդական փոխանակման ծրագրեր, ուսումնական այցեր և այլն) Մասնաճյուղի մասնակցության համար: Այդ կազմակերպության 2016թ. հայտարարած մրցույթի հաղթող Մասնաճյուղի աշխատակիցը 2016 թ.-ի սեպտեմբերի 19-28-ը Սլովակիայի Կոշիցե քաղաքում մասնակցել է երիտասարդական փոխանակման ծրագրի, որը նվիրված էր Եվրոպայում և նրան հարակից տարածաշրջանում խաղաղության և հանդուրժողականության հարցերին: Ծրագրին մասնակցել են պատվիրակություններ Հայաստանից, Վրաստանից, Լեհաստանից, Չեխիայից, Սլովակիայից, Թուրքիայից և Ուկրաինայից:

Արտաքին կապերի ընդլայնման և միջազգայնացման գործընթացների ամրապնդման խնդիրները շարունակում են մնալ Մասնաճյուղի ռազմավարական առաջնահերթությունների ցանկում: Ընդ որում, տնտեսության և աշխատաշուկայի օրեցօր ընդլայնվող գլոբալացման արդի պայմաններում Մասնաճյուղի միջազգային այցեքարտի ամրապնդումը նպատակա-

հարմար կլինի ձևակերպել որպես հաջորդ հնգամյակի առանձին ռազմավարական նպատակ՝ իր յուրահատուկ խնդիրներով:

Հավելված 3

**ՀԱՊՀ ԳՅՈՒՄՐՈՒ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՈՒԺԵՂ ՈՒ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ,
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՄՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԸ**

Ուժեղ կողմեր (Strengths)	
➤	Տարածաշրջանում Մասնաճյուղի մենաշնորհային դիրքը ինժեներական կրթության և տեխնիկական գիտությունների ասպարեզներում:
➤	Մասնաճյուղի շրջանավարտների նկատելի ներգրավվածությունը մարզի քաղաքական, տնտեսական, արդյունաբերական ղեկավար կառույցներում և ընտրովի մարմիններում:
➤	Գործելով ՀԱՊՀ կազմում՝ Մասնաճյուղը նրա հետ համաքայլ մասնակցում է Բոլոնիայի գործընթացի շրջանակներում իրականացվող կրթական, գիտության կազմակերպման և ինստիտուցիոնալ բարեփոխումներին միտված բոլոր գործընթացներին:
➤	Մասնաճյուղում տարբեր կրթական ծրագրերով բազմաստիճան կրթության (ավագ դպրոցի, միջին մասնագիտական, բակալավրական, մագիստրոսական ծրագրեր) իրականացում, ինչը ապահովում է շահառուների կրթության շարունակականության հնարավորությունը:
➤	Մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական համակազմում գիտական աստիճան և կոչում ունեցող աշխատակիցների բարձր տոկոսային հարաբերություն, ինչը համաչափելի է հանրապետության լավագույն բուհերի հետ:
➤	SS և բիզնես ոլորտում որպես հանրապետությունում ՀՀ Կառավարության կողմից սահմանված ռազմավարական նշանակությամբ առաքելություն իրականացնող Գյումրու Տեխնոլոգիական կենտրոնի, SS ոլորտի և Գյումրիում գործող այլ գիտաարտադրական կազմակերպությունների հետ սերտ ու փոխշահավետ համագործակցություն:
➤	Մասնաճյուղն ունի Ռազմավարական պլանում ձևակերպված հստակ առաքելություն և նպատակներ:
2	Թույլ կողմեր (Weaknesses)
➤	Մասնաճյուղում դասախոսական կազմի և վարչակազմի անբարենպաստ տարիքային կազմ՝ բարձր միջին տարիք: Դասախոսական կազմի համալրման և երիտասարդացման անբավարար տեմպեր և սահմանափակ ռեսուրսներ, ասպիրանտուրայի լավագույն շրջանավարտների՝ Մասնաճյուղում աշխատելու ցածր շահագրգռվածություն:
➤	Մասնաճյուղում ուսումնական լաբորատորիաների արդիականացման ենթակա սարքավորումների մեծ չափաբաժին:
➤	Մասնաճյուղի ուսումնական մակերեսների պակաս, մասնաշենքերի ու կոմունիկացիաների կրիտիկական տարիք և այս կապակցությամբ վերանորոգման ու շահագործման աճող ծախսեր:
➤	Մասնաճյուղի ֆինանսական ներհոսքի ձևավորման գործընթացում վճարովի ուսուցման գերակա չափաբաժին, որը չի բավարարում Մասնաճյուղի զարգացմանը անհրաժեշտ կարիքները լիարժեք հոգալուն:
➤	Դասախոսական կազմի՝ հետազոտական աշխատանքներում անբավարար

	ներգրավվածություն և ցածր շահագրգռվածություն:
3	Հնարավորություններ (Opportunities)
➤	ՀԱՊՀ ներուժի առավել ակտիվ ներգրավմամբ՝ Մասնաճյուղում նոր կրթական ծրագրերի ստեղծում ու կատարելագործում:
➤	Կրթության հասանելության ընդլայնում, հեռավար կրթության, ուսումնառության ոչ ավանդական ճկուն ձևերի, նոր կրթական տեխնոլոգիաների ներմուծում, Մասնաճյուղի մուտքի հնարավորինս ընդլայնում: Այդ նպատակի իրագործման համար Մասնաճյուղի կայքի հնարավորությունների լիարժեք օգտագործում:
➤	Մասնաճյուղում ուսուցման որակի ինստիտուցիոնալ մշակույթի շարունակական զարգացում, որակի ներքին ապահովման համակարգի հնարավորությունների լիարժեք օգտագործում:
➤	Շիրակի մարզում ինֆորմացիոն տեխնոլոգիաների ոլորտի զարգացման կայուն միտումներ և դրանով պայմանավորված՝ բարձրորակ ինժեներական աշխատուժի աճող պահանջարկ:
➤	Մասնաճյուղի շահեկանորեն տարբերվող գովազդարշավի կազմակերպում:
4	Սպառնալիքներ (Threats)
➤	Հանրապետության մյուս մարզերի համեմատ Շիրակի մարզում և հատկապես Գյումրիում արտագաղթի և գործազրկության բարձր ցուցանիշներ և այդ ֆոնի վրա՝ դպրոցի շրջանավարտների նվազող թիվ և ժողովրդագրական վատթարացող սցենար:
➤	Շիրակի մարզի հետերկրաշարժյան արդյունաբերական ենթակառուցվածքների ձևավորման հարատև սաղմնային վիճակ և արդյունաբերության կողմից ինժեներական կրթության անբավարար պահանջարկ:
➤	Դիմորդների քանակի նվազման և ֆինանսական սահմանափակ ռեսուրսների պայմաններում աճող մրցակցություն Գյումրիում բուհական կրթական ծառայություններ առաջարկող հաստատությունների միջև:
➤	Պետության կողմից բարձրագույն կրթության և գիտության ոչ բավարար ֆինանսավորման պայմաններում մարզային (արտաերևանյան) ուսումնական հաստատությունների առաջանցիկ զարգացմանը նպաստելու միտման բացակայություն:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ թիվ 01

28 օգոստոսի 2017 թ.

ՀԱՊՀ Գյումրու մասնաճյուղի 2017-
2021 թթ. ստրատեգիական պլանի
հաստատման մասին

Լսելով Գյումրու մասնաճյուղի տնօրեն Ա.Պապոյանի հաղորդումը մասնաճյուղի 2017-2021 թթ. ստրատեգիական պլանի մասին և հիմք ընդունելով Գիտական խորհրդի «Կանոնադրական համակարգման և կառուցվածքային փոփոխությունների» ու «Ստրատեգիական պլանավորման և որակի ապահովման» մշտական հանձնաժողովների համատեղ նիստի երաշխավորությունը՝

Գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ՀԱՊՀ Գյումրու մասնաճյուղի 2017-2021 թթ. ստրատեգիական պլանը՝ ըստ հավելվածի:
2. Հանձնարարել Գյումրու մասնաճյուղի տնօրեն Ա.Պապոյանին՝ կազմել և ներկայացնել Գյումրու մասնաճյուղի 2017-2021 թթ. ստրատեգիական պլանի իրականացման միջոցառումների պլան-ժամանակացույցը:

Նախագահ

Ո. ՄԱՐԴՈՒԽՅԱՆ

Քարտուղար

Հ. ԲԱԼԱԲԱՆՅԱՆ

